Ազգ
Azg
11 ՀՈՒՆԻՍ 2011 ՇԱԲԱԹ 107(4726)
ISSN: 1829-1651

# Գարեգին Բ. «Մեր հանդիպումը պետք է նոր առիթ դառնա՝ պատասխաններ գտնելու հառնող հարցերին»

Հնգօրյա միջեկեղեցական եւ հովվապետական այցով, Վրաց ուղղափառ եկեղեցու պատրիարք Իլյա Երկրորդի հրավերով Վրաստանում է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն: Փաստորեն ի վերջո կայացավ Վեհափառի բազմաթիվ անգամ հետաձգված այցը: Վրացական Սադախլո անցակետում մեր պատվիրակությանը դիմավորել են վրաց պատրիարքը եւ հոգեւորականները, Թբիլիսիի եւ Մառնեուլի հայ համայնքների ներկայացուցիչներ: Ամենայն հայոց կաթողիկոսը ողջույնի խոսքով դիմել է վրաց պատրիարքին եւ ներկա ժողովրդին. «Մենք անչափ ուրախ ենք, որ մեր մուտքը Վրաստան ողջունվում է այսպիսի ջերմությամբ վրաց եւ հայ հավատացյալների կողմից: Ձեր ժպտացող դեմքերն ու հայացքները խոսում են այն ուրախության մասին, որով դուք ընդառաջ եք ելել ձեր հայրապետներին»: Այնուհետեւ ողջունել է Իլյա Երկրորդը, բարի գալուստ մաղթել Ամենայն հայոց կաթողիկոսին եւ խոսել երկու ժողովուրդների բարեկամության մասին: Հետո պատվիրակություններն ու դիմավորողները մեկնել են Թբիլիսի, որտեղ Սուրբ Երրորդություն եկեղեցում դիմավորման պաշտոնական արարողություն է տեղի ունեցել: Միմյանց ողջունելուց հետո զույգ հոգեւոր առաջնորդներն աղոթք են ուղղել առ Աստված: Ներկա հոգեւոր դասին եւ բարեպաշտ ժողովրդին այս առիթով իր օրհնությունն ու պատգամն է բերել Գարեգին Բ կաթողիկոսը: Գոհություն հայտնելով Բարձրյալին՝ հանդիպման համար, Նորին Սրբությունը մասնավորաբար նշել է. «Վրաստան ենք ուղեւորվել Ձեր հրավերով եւ Վիրահայոց թեմ հովվապետական այց կատարելու համար: Ձեր եղբայրության հետ աղոթական օրեր պիտի ապրենք՝ հանդիպելով մեր եկեղեցիների հավատավոր զավակներին, այցելելով հայոց եւ վրաց եկեղեցիներ ու վանքեր: Պիտի քննարկենք երկուստեք մեր եկեղեցիներին հուզող հարցեր եւ խոսենք մեր համագործակցությունը զորացնելու հնարավորությունների մասին: Եկել ենք քաջալեր հոգով եւ հավատով, որ մեր հանդիպումը պիտի ամրապնդի դարերով վկայված եղբայրությունը եւ բարեկամությունը մեր ժողովուրդների եւ նոր առիթ դառնա պատասխաններ գտնելու մեր առջեւ այսօր հառնող հարցերին, հաղթահարելու մեր մտահոգություններն ու դժվարությունները՝ ի սեր այն մեկ եւ նույն հույսի, որին Աստված կոչեց մեզ»:

Ս. Խ.



# Կազանում լուրջ ճեղքում չեն սպասում, բայց նախնական համաձայնագիր կամ հայտարարություն հնարավոր է



ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի ԱԺ-ի եւ ԼՂՀ ԱԺ-ի միջեւ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի ութերորդ նիստի ժամանակ, փակ ընթացակարգով երեկ քննարկվեց «Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացը եւ ՀՀ-ԼՂՀ խորհրդարանական դիվանագիտական հնարավորությունների համակարգումը» հարցը, իսկ դրանից առաջ, նիստը բացելով, ելույթներ ունեցան ե՛ւ Հայաստանի Ազգային ժողովի, ե՛ւ ԼՂՀ Ազգային ժողովի նախագահները: «Բանակցային գործընթացն աստիճանաբար ավելի հաստատուն է դարձնում այն միտքը, որ ԼՂ ժողովուրդն ինքը պիտի տնօրինի սեփական ճակատագիրը, եւ նրա ինքնորոշումն այլընտրանք չունի: Հայկական կողմը բազմիցս նշել է, որ պատրաստ է խնդրի լուծման հասնել խաղաղ բանակցությունների միջոցով, սակայն դա չի նշանակում, թե մեր տարածքների ու բնակչության դեմ որեւէ ոտնձգություն անպատասխան է մնալու: Մեր ժողովուրդը բազմիցս է ապացուցել զենքի ուժով հարց լուծելու ոմանց գայթակղությանը համարժեք հակահարված տալու իր կարողությունը: ԼՂ հարցում Հայաստանը երբեք չի անտեսի ԼՂ իշխանությունների եւ ժողովրդի կարծիքն ու դիրքորոշումը», իր ելույթում ասաց **Հովիկ Աբրահամյանը**:

Տես էջ 2

# «Սադրիչ գործողություններից եւ հայտարարություններից մնալ ձեռնպահ այս վճռորոշ պահին»

ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահները Լեռնային Ղարաբաղի հակամարտության կողմերին կոչ են արել «ձեռնպահ մնալ պրովոկացիոն գործողություններից եւ հայտարարություններից, որոնք կարող են վնասել բանակցային գործընթացին այս վճռորոշ պահին»:

ԵԱՀԿ-ի կայքում զետեղված հաղորդագրության համաձայն, Մինսկի խմբի համանախագահներ Բեռնար Ֆասիեն (Ֆրանսիա), Ռոբերտ Բրադկեն (ԱՄՆ) եւ Իգոր Պոպովը (Ռուսաստան) հունիսի 6-ից 9 տարածաշրջան կատարած այցի ընթացքում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարների հետ քննարկել են կողմերի քայլերը, որոնք անհրաժեշտ են հակամարտության խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքների շուրջն աշխատանքը ավարտին հասցնելու եւ դրանց վերաբերյալ իրենց աջակցությունը հայտնելու համար, ինչպես կոչ էր արվում նախագահներ Մեդվեդեւի, Օբամայի եւ Սարկոզիի կողմից Ֆրանսիայի Դովիլ քաղաքում մայիսի 26-ին ընդունված հայտարարությունում:

Համանախագահները նշել են, որ հունիսի 7-ին իրենք ադրբեջանական կողմից Աղդամի շրջանում ոտքով հատել են շփման գիծը, ինչը վերջին 10 ամիսների ընթացքում արվում է երրորդ անգամ, նույնքան, որքան անգամ շփման գիծը հատվել է նախորդ 16 տարիների ընթացքում, դրանով իսկ ապացուցելով, որ կողմերը կարող են համագործակցել եւ լիարժեք իրագործել 1994 թվականի հրադադարի պայմանները: «Այս առնչությամբ համանախագահները կողմերին կոչ են անում ձեռնպահ մնալ պրովոկացիոն գործողություններից եւ հայտարարություններից, որոնք կարող են վնասել բանակցային գործընթացին այս վճռորոշ պահին», ասված է ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարության մեջ:

Նշենք, որ «այս վճռորոշ պահին», ինչն, ամենայն հավանականությամբ, Կազանի եռակողմ հանդիպման նախաշեմն է, «պրովոկացիոն գործողություններ եւ հայտարարություններ» կարող է դիտարկվել Ադրբեջանի ԱԳ նախարար Մամեդյարովի ավելի վաղ հնչեցրած հայտարարությունը, թե «հակամարտ կողմերն արդեն համաձայնեցրել են խաղաղապահ ուժերի կազմը, որոնք պետք է ներկայացվեն հակամարտության գոտում»: Հիշեցնենք՝ այս «փոխադարձ համաձայնությունը» երեկ հերքեց Հայաստանի ԱԳ նախարարը:

Հ. Ա.

# Իլհամ Ալիեւը Ղարաբաղը նմանեցնում է Կոսովոյին

**Ինչպես ավելի վաղ նշել է «Ազգը», Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը որոշել է նախքան Կազան՝ Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների հետ հանդիպման մեկնելը, «շրջագայել» Բալկաններում: Այս օրերին Ալիեւը Սլովենիայում է, իսկ ավելի վաղ պետական այցով Սերբիայում էր: Գաղտնիք չէ, որ այս երկիրը չի ճանաչում Կոսովոյի անկախությունը, սակայն միեւնույն ժամանակ, երբեք չի հայտարարում, որ «սերբական բանակը ամեն գնով հետ կբերի իր օկուպացված հողերը»: Նշենք նաեւ, որ Կոսովոյի անկախությունը ճանաչած երկրները՝ հիմնականում արեւմտյան, բազմիցս շեշտել են, որ «սա չի կարող նախադեպային լինել այլ չճանաչված միավորումների անկախությունը ճանաչելու համար, քանի որ ամեն մի նման հակամարտություն տարբեր է»: Թվում է, թե այս վերջին հայտարարությունից ամենաշատը «ուրախ» պետք է լիներ Իլհամ Ալիեւը, սակայն նա Սերբիայում հանդես է եկել ահա թե ինչ հայտարարությամբ. «Սերբիան էլ, Ադրբեջանն էլ նման տուժում է անջատողականությունից: Մենք հույս ունենք, որ ձեր տարածքային ամբողջականությունն էլ կվերականգնվի»:**

**Ադրբեջանական «Ազադլիգը» այս հայտարարությունը նախ որակում է «իդեալիստական», ապա եւ՝ «վտանգավոր եւ չհաշվարկված». «Այս հայտարարությունը նշանակում է, որ Բաքուն նույնականացնում է Կոսովոյի եւ Ղարաբաղի հակամարտությունները: Ավելին՝ Կոսովոյից ադրբեջանցի խաղաղապահներին հետ կանչելով, Բաքուն ցուցադրեց, որ Կոսովոյի եւ Ղարաբաղի միջեւ նույնություն է տեսնում, եւ իր այդ քայլով բողոքում է Կոսովոյի հակամարտության նման լուծման դեմ: Այս անգամ արդեն այդ երկու հակամարտությունների մեջ զուգահեռներ անցկացնում է Ադրբեջանի նախագահը»: «Ազադլիգը» եզրակացնում է զգուշացումով՝ «Ալիեւի այս հայտարարությունից հետո միջազգային հանրությունը կարող է մտածել, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրը պետք է լուծել Կոսովոյի օրինակով»: Ճիշտ է, «Ազադլիգը» «մոռացել» է նշել, որ միջազգային հանրությունը, հաշվի առնելով, որ Բաքուն պաշտոնական ներկայացուցչություն ունի «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունում» կամ լուրջ ապրանքաշրջանառություն է ծավալում չճանաչված Տայվանի հետ, կամ էլ դիվանագիտական փաստաթղթերում ճանաչում է Պաղեստինի հանրապետությունը, կարող է որոշել Ղարաբաղի հարցը լուծել ոչ Կոսովոյի օրինակով, ուրիշ օրինակներն էլ բազմաթիվ են:**

Հ. Ա.

ՇԻՐԱԿ

# Բազմաթիվ անօթեւան ընտանիքներ չեն շտապում մասնակցել բնակբաշխման գործընթացին

Հնգամսյա ընդմիջումից հետո, որը հիմնականում պայմանավորված էր որոշ տեխնիկական պատճառներով, հունիսի 13-ից վերսկսվում է Գյումրու Մուշ-2 թաղամասում անցյալ տարի բաշխված բնակարանների անվճար սեփականաշնորհման գործընթացը: «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպությունը, տեղեկացնելով այս մասին, ուրբաթ օրվանից հեռախոսով մեկառմեկ իրազեկում է նաեւ համապատասխան շենքերի շահառու ընտանիքներին: Բնակարանների սեփականաշնորհմանը կարող են մասնակցել այն ընտանիքները, որոնք քանդել են ժամանակավոր կացարանները եւ կներկայացնեն այդ մասին տեղեկանք: Ըստ սահմանված գրաֆիկի առաջիկա երկու օրերին սեփականաշնորհելու իրավունք ունեցող ընտանիքների ամբողջական ցուցակներն արդեն նաեւ տեղադրված են նշված ՀԿ-ի վեբ-կայքում:

«Շիրակ կենտրոնը» տարածած մեկ այլ հաղորդագրությամբ նաեւ տեղեկացնում է, որ Գյումրիում ու Ախուրյան համայնքում ներկայումս բնակբաշխման կառավարական հանձնաժողովի կողմից իրականացվում են երկրաշարժից անօթեւանների հերթացուցակներում մինչեւ այժմ հաշվառված ընտանիքների փաստաթղթերի ընդունման եւ ուսումնասիրման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում ներկայումս փոխհատուցվում են միայն բազմաբնակարան շենքերում բնակարան կորցրած, փլված շենքերի կամ ժամանակավոր կացարանների բնակիչները: Եվ չնայած մարզային հեռուստաընկերություններով արդեն երեք ամիս շարունակ համապատասխան իրազեկող հայտարարություններ են հեռարձակվում, ինչպես նաեւ ծանուցագրեր են ուղարկվել Գյումրու անօթեւանների հերթացուցակում հաշվառված 3000 եւ Ախուրյանում 182 ընտանիքների հասցեներով, մինչեւ օրս Գյումրիում անհրաժեշտ փաստաթղթեր չեն ներկայացրել շուրջ 1200, իսկ Ախուրյանում՝ 50 ընտանիքներ: Մինչդեռ, ինչպես նշվում է, ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից նախքան շենքերի շահագործումը բոլոր անօթեւան ընտանիքների փաստաթղթերի ընդունումը, ուսումնասիրումն ու ընտանիքներին շահառու ճանաչելը հետապնդում է մի նպատակ՝ որպեսզի բնակարանների քանակն ու սենյակների թիվը կառուցվեն ըստ առկա պահանջարկի: Սահմանված ժամկետներում փաստաթղթեր չներկայացրած ընտանիքների բնակարանային ապահովման հարցը կտեղափոխվի ավելի ուշ ժամկետներ:

Տես էջ 2

# ՀՀԿ-ն երկխոսելու համար պատվիրակություն չի կազմի

Թե ինչու միայն երեք տարի անց ՀԱԿ-ն ու ՀՀԿ-ն սկսեցին երկխոսել՝ ԱԺ ՀՀԿ խմբակցության անդամ **Գագիկ Մինասյանը** հստակ պատասխան չունի: Նա ենթադրում է, որ արմատական ընդդիմությունը փորձեց իր հնարավորություններն իր դավանած գաղափարների շրջանակներում, սակայն անհաջող փորձերից հետո եկավ եզրահանգման, որ անհրաժեշտ է երկխոսել: Մինասյանի մեկնաբանությամբ՝ երկխոսության համար այսօր իրավիճակը բարենպաստ է:



Տարօրինակ է, որ երկխոսության վերաբերյալ կողմերը բոլորովին տարբեր կարծիքներ ու պատկերացումներ ունեն:

Մինասյանն, օրինակ, կարծում է, որ կարող են զրուցել-երկխոսել թեկուզ բանավեճերի ժամանակ, ասուլիսների ժամանակ (պետք է փաստել, որ արդեն 3 տարի նման կլոր սեղաններ, հանդիպումներ ու քննարկումներ բազմաթիվ անգամ կազմակերպվել են լրագրողների մասնակցությամբ: Հիմնականում դրանք նման էին ոչ թե երկխոսության, այլ միմյանց հասցեին ուղղված վիրավորանքների կամ մեղադրանքների-Հ. Հ.): Մինչդեռ ՀԱԿ-ը կազմել է պատվիրակների 5-հոգանոց խումբ, ովքեր պետք է ՀԱԿ-ի անունից բանակցեն ՀՀԿ-ի հետ: ՀՀԿ-ն պատվիրակների ցուցակ չի կազմել եւ, ըստ Մինասյանի, ցանկություն եւ մտադրություն էլ չունի ցուցակ կազմելու:

«ՀՀԿ-ում կան բազմաթիվ մարդիկ, ովքեր կարող են հանդիպել, զրուցել ՀԱԿ-ի ներկայացուցիչների հետ: Պատվիրակ կազմելու կարիք չկա: Այդ նոր ձեւաչափը ոչինչ չի տա»: Մինասյանի մեկնաբանությամբ՝ ՀԱԿ-ը իր պատվիրակներով կարող է հանդիպել ՀՀԿ ներկայացուցիչների հետ՝ ՀՀԿ գրասենյակում, խորհրդարանում, ինչու ոչ, թեկուզ Առնո Բաբաջանյանի արձանի մոտ ու քննարկել երկրի խնդիրները:

Այս ընթացքում Մինասյանը ՀԱԿ-ի ներկայացուցիչների հետ հանդիպում չի ունեցել. առաջարկ չի եղել: Պատգամավորը տեղյակ չէ, սակայն չի բացառում, որ ՀՀԿ այլ ներկայացուցիչները հանդիպած կլինեն ՀԱԿ-ի անդամների հետ:

Թե ինչի մասին պետք է երկխոսեն կողմերը, երբ ՀԱԿ-ը, թեպետ հայտարարում է, որ երկխոսության դուռը կիսաբաց է, միաժամանակ հավելում է, որ գոյություն ունի ջրբաժան՝ պահանջելով արտահերթ խորհրդարանական եւ նախագահական ընտրություններ՝ Մինասյանն ասաց, որ կերկխոսեն սոցիալական, տնտեսական խնդիրների շուրջը:

«Այս բնագավառներում երկխոսությունը շատ կարեւոր է: Արտահերթ ընտրությունների մասին երկխոսությունը բացառված է: ՀԱԿ-ի պահանջները պետք է լինեն առարկայական, իսկ արտահերթ ընտրությունների համար քաղաքական եւ իրավական որեւէ հիմք չկա:

Մեկնաբանելով ՀՀ առաջին նախագահ, ՀԱԿ-ի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանի «Ուզում են, թող երկխոսեն, չեն ուզում՝ մեղքն իրենց վիզը» արտահայտությունը, Մինասյանն ասաց, որ նման հայտարարություն անելը ամենաանշնորհակալ գործն է:

Հ. Հ.

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Միրոսլավ Լայչակին

**ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է ԵՄ արտաքին գործողությունների եվրոպական ծառայության Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հարցերով կառավարիչ-տնօրեն Միրոսլավ Լայչակի գլխավորած պատվիրակությանը:**

**Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի՝ որպես Եվրամիության արեւելյան գործընկեր երկրի եւ ԵՄ-ի հարաբերությունների ներկա իրավիճակը եւ հետագա զարգացման հեռանկարները:**

**Պարոն Լայչակը դրական է գնահատել համագործակցության ներկայիս մակարդակը, Ասոցացման համաձայնագրի եւ ԽՀԱԱՏ-ի շուրջ բանակցությունների ընթացքը, ինչպես նաեւ վիզաների դյուրացմանն ուղղված ջանքերը՝ վերջինիս փոքր-ինչ դանդաղ ընթացքը բացատրելով ԵՄ-ի կողմից միգրացիոն քաղաքականության հորիզոնական վերանայմամբ: Նա նաեւ նշել է, որ Եվրոպական միությունն այժմ իր գործընկերներից ակնկալում է ոչ միայն կայունություն, այլեւ առաջընթաց եւ բարեփոխումներ:**

**Արթուր Բաղդասարյանը ողջունել է արեւելյան գործընկեր երկրների հետ հարաբերությունների խորացման համատեքստում Եվրամիության որդեգրած նոր՝ անհատական մոտեցումը, ըստ որի մշակվում եւ իրականացվում են այնպիսի ծրագրեր եւ գործողություններ, որոնք բխում են տվյալ երկրի քաղաքական, իրավական, տնտեսական իրավիճակից, ինչպես նաեւ տվյալ երկրում այդ ծրագրերի կենսագործման քաղաքական պատրաստակամությունից:**

**ԱԱԽ քարտուղարը ներկայացրել է ընթացիկ բարեփոխումների չորս ուղղվածությունները՝ քաղաքական ոլորտ, տնտեսական ոլորտ՝ ԵՄ-ի խոր եւ համապարփակ ազատ առեւտրի տարածքի ստեղծում, արդարադատության, ազատության եւ անվտանգության ոլորտ, ինչպես նաեւ պետական կառավարման համակարգի բարեփոխումներ: Հայաստանում ԵՄ խորհրդատվական խմբի աջակցությամբ իրականացվում է նաեւ հանրային իրազեկման լայն քարոզարշավ՝ բարեփոխումային գործընթացների լուսաբանման եւ տարբեր ոլորտներին առնչվող քննարկումների կազմակերպման նպատակով անցկացվող սեմինարների եւ աշխատաժողովների միջոցով:**

**Արթուր Բաղդասարյանը նշել է, որ առկա են բոլոր պայմանները, եւ ստեղծված է հետեւողական եւ հուսալի մեխանիզմ՝ բարեփոխումների հետագա առաջխաղացման համար, քանի որ Հայաստանի Հանրապետությունը հաստատակամ է շարունակելու եվրոպական չափանիշներին համապատասխան բարեփոխումների իրականացման դժվարին, բայց միեւնույն ժամանակ հեռանկարային ուղին:**

**Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ Հայաստանի հարեւան երկրներին եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առնչվող հարցեր:**

*ԱԱԽ մամուլի ծառայություն*

# Արթուր Բաղդասարյանն ընդունել է Ֆիլիպ Լեֆորին

**ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության մայրցամաքային Եվրոպայի հարցերով վարչության պետ Ֆիլիպ Լեֆորի գլխավորած պատվիրակությանը:**

**Կողմերը երկուստեք խիստ դրական են գնահատել Հայաստան-Ֆրանսիա երկկողմ քաղաքական, տնտեսական եւ մշակութային կապերը՝ նշելով, որ դրանք հիմնված են երկու ժողովուրդների երկարամյա ջերմ եւ բարեկամական հարաբերությունների վրա: Զրուցակիցները կարեւորել են հարաբերությունների առկա մակարդակի պահպանման եւ հետագա խորացման եւ այս համատեքստում թվինինգային ծրագրերի՝ երկկողմ համագործակցության հետագա խթանմանը նպաստող գործիքների առավել լայնամասշտաբ կիրառման անհրաժեշտությունը:**

**Անդրադառնալով Հայաստանում իրականացվող եվրոպական չափանիշներին համապատասխան բարեփոխումների ընթացքին՝ Արթուր Բաղդասարյանն ընդգծել է այդ գործընթացներում Ֆրանսիայի ներգրավվածության հետագա խորացման կարեւորությունը:**

**Հանդիպման ընթացքում քննարկումներ են ծավալվել նաեւ միջազգային եւ տարածաշրջանային անվտանգության իրավիճակին առնչվող հարցերով:**

*ԱԱԽ մամուլի գրասենյակ*

# Բազմաթիվ անօթեւան ընտանիքներ չեն շտապում մասնակցել բնակբաշխման գործընթացին

*1-ին էջից*

«Հարյուրավոր անօթեւան ընտանիքների կողմից բնակարան ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր չներկայացնելու հանգամանքը չի կարող զարմանք չառաջացնել,- ասվում է տարածված հաղորդագրությունում:- Եթե նախորդ տարի դրա հիմնական պատճառն այն էր, որ հարյուրավոր անօթեւան ընտանիքներ չէին կարող փաստաթղթերը համալրել՝ ընտանիքներում բացակա անդամներ ունենալու կամ ընտանիքների բազմանդամության պատճառով, ապա ընթացիկ տարում ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում փոփոխություններ կատարելուց հետո նման պատճառաբանություններն այլեւս հիմք չունեն: Կատարված փոփոխություններով հնարավորություն է տրվել բացակա անդամների մասին համապատասխան հայտարարություն ներկայացնելով եւ որոշակի պարտավորություն ստանձնելով ստանալու բնակարան, իսկ բազմանդամ ընտանիքներն էլ այլեւս կարող են բնակարաններ ստանալ եւ դրանք սեփականաշնորհել առանց տնակներից մեկը հանձնելու»:

«Շիրակ կենտրոնի» դիտարկումներով՝ այդքան ընտանիքների կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ժամանակին չներկայացնելը կարող է ունենալ երեք հիմնական պատճառ: Առաջինը՝ որ նրանցից շատերն ամբողջ ընտանիքով բացակայում են Հայաստանից, երկրորդը՝ ընտանիքներում անհամաձայնություն կա ապագա բնակարանի պատկանելության հարցում: Եվ երրորդ՝ մնում է ենթադրել, որ մի մասն էլ տարբեր ճանապարհներով եւ հիմնականում օրենքը շրջանցելով է ընդգրկվել անօթեւանների հերթացուցակում, ուստի ներկայումս, երբ բնակբաշխումն ընթանում է օրենքի սահմաններում, խուսափում են մերժվելու հեռանկարից, հավանաբար սպասելով «հարմար ժամանակների»:

Գ. Մ.

# Կազանում լուրջ ճեղքում չեն սպասում, բայց...

*1-ին էջից*

**ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանն իր ողջույնի խոսքում նկատեց, թե հայկական երկու պետությունների փոխհարաբերությունների եւ սերտ համագործակցության մի քանի կայացած ձեւաչափեր եւ հարթակներ կան, այդ թվում՝ միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովը. «Այս հարթակը, այս ձեւաչափը հնարավորություն է, որ մենք մշտապես գտնվենք մտքերի փոխանակության, ապագա քայլերի նախանշման աշխատանքային ռեժիմում»:**

**Նիստի ընդմիջմանը Ա. Ղուլյանը պատասխանեց լրագրողների հարցերին: Ըստ նրա՝ որ այսօր ակտիվություն կա բանակցային գործընթացում, ու կարող է թվալ հանգուցալուծումը մոտ է, դա նոր չէ, նախկինում էլ այդպիսի պահեր եղել են, ու այս անգամ էլ կարծես թե ամեն ինչ կրկնվում է նոր փուլով, համանախագահ երկրների ղեկավարների հայտարարությունն էլ կարծես թե ավելի կոնկրետացնում է անելիքները. «Բայց Ղարաբաղի Ազգային ժողովի սպասելիքներն այս առումով այնքան էլ լավատեսական չեն, որովհետեւ նույնիսկ այդ հայտարարությունից հետո Ադրբեջանի քայլերում ու հայտարարություններում բանակցային գործընթացը նենգափոխելու, հիմնախնդրի կարգավորման մեջ նոր տարրեր մտցնելու եւ ռազմատենչ հայտարարությունների պակաս չի զգացվում»:**

**Կազանում փաստաթուղթ, ճանապարհային քարտեզի ստորագրում ԼՂՀ ԱԺ նախագահը սպասու՞մ է. «Ազգի» այս հարցին ի պատասխան՝ Ղուլյանը նկատեց. «Հավանականության տեսությամբ ճիշտ չի լինի խոսելը, կարող է լինել ինչ-որ համաձայնություն, բայց կարող է լինել նաեւ փակուղային վիճակ»:**

**Խաղաղարար ուժերի տեղակայման մասին ինչ-որ պայմանավորվածություն հնարավոր համարվու՞մ է, այդ մասին Ադրբեջանի արտգործնախարարն էր հայտարարել: «Խաղաղապահ ուժերի մասին խոսելը կարծում եմ մի քիչ վաղաժամ է, կողմերը պետք է համաձայնություն տան, դա կապված է եւ խաղաղապահ ուժերի կազմի, եւ տեղաբաշխման գոտիների հետ», նկատեց Ղուլյանը՝ հավելելով, թե այս փուլում կարծես թե դրա հիմքերը չկան, պետք չէ առաջ ընկնել: Իսկ բանակցային գործընթացում փակուղային վիճակի դեպքում՝ քննարկումները կշարունակվեն, եւ հատկապես աշնանը սպասելի կլինի քննարկումների նոր փուլ, որտեղ նաեւ խորհրդարանական դիվանագիտության հնարքները պետք է օգտագործել եւ ճիշտ ներկայացնել ղարաբաղյան կողմի տեսակետները. «Իհարկե, Հայաստանն այսօր միջազգային ատյաններում ներկայացնում է ԼՂՀ-ն, բայց մեր գործընկերներն էլ արձանագրեցին, որ դա չի նշանակում, թե Հայաստանը չի կարող իրենով փոխարինել ԼՂՀ-ն»: Համանախագահների նախորդ օրվա հայտարարությունը՝ սադրանքներից զերծ մնալու վերաբերյալ, ու՞մ է հատկապես ուղղված իր ենթատեքստով, հետաքրքրվեց «Ազգը»: «Համանախագահներն իրենց հայտարարություններում, եթե նկատել եք, հասցեներ չեն նշում, բայց ասվածը շատ կոնկրետ հասցե ունի, նրանք այդ ամենն ուղղում են նրան, ով նախկինում այդպիսի սադրիչ գործողություններ է թույլ տվել»:**

**Միջանկյալ կարգավիճակ՝ առանց հստակեցնելու հանրաքվեի ժամկետը, ընդունելի՞ է ղարաբաղյան կողմի համար: «Դուք ընդհանրապես առաջ եք ընկնում, այսօր որեւէ մանրամասնության մասին բանակցություն չի գնում»: Իսկ որ Կասպրշիկն էր ասում այդ մասին, այս հիշեցմանը պատասխանեց ԼՂՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Վահրամ Աթանեսյանը. «Կասպրշիկը դիվանագիտական առաքելությունն ավարտող անձնավորություն է եւ փորձում է օրիգինալ երեւալ՝ չարտահայտելով ընդհանուր տրամադրվածությունը: Այստեղ մենք սկզբունք պետք է ընդունենք Մինսկի խմբի համանախագահ երկրների առաջնորդների հայտարարությունը, որտեղ առավելագույն հորդորը սկզբունքների շուրջը համաձայնության գալն է: Իսկ սկզբունքների շուրջը համաձայնություն չի լինի, քանի որ Ադրբեջանը չի ստորագրի այնպիսի փաստաթուղթ, որտեղ արձանագրված կլինի մի պարտավորություն՝ ուժի չկիրառման մասին: Իսկ եթե Ադրբեջանը դրան համաձայն է, ապա դա կնշանակի, որ Ադրբեջանը ճանապարհ է բացում ԼՂՀ փաստացի անկախության միջազգայնացման համար, որին կարելի է հետեւել կողմերին վերաբերող բոլոր մյուս հարցերի քննարկման ժամանակ: Ժամանակից առաջ չընկնենք», ասաց նա:**

**Մի խոսքով՝ ԼՂՀ ԱԺ նախագահը եւ «Ազգի» հարցին պատասխանած ԼՂՀ արտգործնախարար Գեորգի Պետրոսյանը Կազանում որեւէ լուրջ ճեղքման չեն սպասում, քանի որ դրա նախապայմանները չեն տեսնում. «Բայց նախնական համաձայնագիր կամ ինչ-որ համաձայնություն, կամ ինչ-որ համատեղ հայտարարություն հնարավոր է, որովհետեւ համանախագահ երկրների ղեկավարները՝ միջնորդները, կարծես թե ամեն ինչ անում են, որ որեւէ մի քայլ արձանագրվի բանակցային գործընթացում», ասաց Ա. Ղուլյանը: Նրա կարծիքով՝ վաղ թե ուշ Ղարաբաղը մասնակցելու է բանակցային գործընթացին:**

Հունիսի 13-ին, ժ. 13-ին, Հայաստանի Ազգային գրադարանի տնօրենության դահլիճում կկայանա Հարություն Իսկահասյանի պատրաստած «Վկայարան Հայկական ցեղասպանության» մատենաշարի Բ գրքի շնորհանդեսը:




«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

# Անցուդարձ

## «Եթե մարդն ունի նպատակ, ինքնասպանության մասին չի մտածում»

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալներով՝ կգա ժամանակ, երբ աշխարհում մահացության ամենաշատ դեպքերը կլինեն սրտանոթային հիվանդություններից, իսկ մահացության բարձր ցուցանիշով երկրորդ տեղում կլինեն ինքնասպանությունները:



Հայաստանի նման փոքր երկրում գրեթե ամենուր ինքնասպանության լուր ենք լսում: Սակայն ինքնասպանություններն ավելացել են ոչ միայն Հայաստանում, այլեւ զարգացած երկրներում, եվրոպական երկրներում, որտեղ մարդիկ շատ ավելի բարեկեցիկ պայմաններում են ապրում, քան Հայաստանում: Մասնագետներն անհանգստանում են՝ եթե այսպես շարունակվի, ԱՀԿ-ի տվյալներն իրականությունից հեռու չեն լինի: «Թե ինչո՞ւ են մարդիկ ինքնասպանության դիմում»՝ հարցի պատասխանները տարբեր են, սակայն բոլոր դեպքերում էլ ինքնասպանության դիմում են նրանք, ովքեր երջանիկ չեն:

Հոգեբան, դասական փորձագետ **Էլդա Գրինն** ասում է, որ նախկինում ինքնասպանություն գործած մահացածներին հուղարկավորել են առանձին գերեզմանոցներում: Երեկ «Ընտրություն» ակումբում փոքր-ինչ անդրադառնալով անցյալի դեպքերին՝ հոգեբանն այնուհետեւ խոսեց մերօրյա իրականությունից: Նրա խոսքով՝ հոգեբանները հիմնականում հիշատակում են ինքնասպանության 5 դրդապատճառ, այնինչ դրդապատճառներն ավելի շատ են: Ինչեւէ, այդ 5 պատճառներից առաջինը մարդկությանն ուղղված կանչ է: «Այս դեպքում մարդը դիմում է ինքնասպանության, որպեսզի հասարակության մեջ նկատեն իրեն, ինքը եւս «տեսանելի» լինի», բացատրում է Էլդա Գրինը: 2-րդ դրդապատճառը խուսափելն է. մարդիկ խուսափում են ինչ-որ պատժից, իրենց ունեցած որեւէ հիվանդությունից, վախենում են ապագայից: 3-րդ դրդապատճառի դեպքում մարդն ուզում է ինքնուրույն պատժել իրեն ու դա անում է ինքնասպանությամբ: Մյուս դրդապատճառը մահվան բնազդն է, ըստ Էլդա Գրինի, նույնիսկ Ֆրոյդն է ասել, որ ինքնասպանությունը մահվան բնազդն է: Իսկ 5-րդ պատճառը սոցիալ-հոգեբանական դեզադապտացիան է. մարդը չի կարողանում հարմարվել իր կյանքին ու աշխարհին եւ դիմում է ինքնասպանության: Էլդա Գրինը կարծում է՝ հազվադեպ է լինում, որ ինքնասպանությունն ընդամենը մի դրդապատճառ է ունենում: Բանախոսն ընդգծում է, որ մեզանում ինքնասպանությունների ավելանալն ավելի շատ կապված է վերոնշյալ 5-րդ դրդապատճառին, այսինքն՝ մարդիկ կյանքին սոցիալ-հոգեբանորեն հարմարվելու խնդիր ունեն: Հոգեբանը նաեւ կարեւորում է բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Երիտասարդները բարձրագույն կրթություն են ստանում ու չեն կարողանում հարմար աշխատանք գտնել. «Քաղաքակիրթ երկրներում հաշվում են, թե տվյալ երկրին քանի մասնագետ է հարկավոր ու բուհերում պատրաստում են նույնքան մասնագետների: Իսկ մեր մոտ... Օրինակ՝ մի քանի բուհերում պատրաստում են հոգեբանների, որոնք ավարտելուց հետո հոգեբանի աշխատանք չեն գտնում»:

Հաճախ ինքնասպանության դիմելու գաղափարը պատում է մարդու միտքն ու հոգին այն ժամանակ, երբ նա այլեւս ապագա չի տեսնում, ապրում է անորոշության մեջ ու չունի նպատակներ: Առհասարակ, մարդը կարող է հարմարվել նույնիսկ վատ պայմաններին, սակայն անորոշությանը հարմարվել չի կարողանում: Անորոշությունը քայքայում է մարդու հոգեկան աշխարհը: «Եթե մարդն ունենա նպատակներ ու իմանա՝ հանուն ինչի՞ է չարչարվում, ապա դժվարություններն հաղթահարելու համար իր մեջ ուժ կգտնի: Եթե մարդն ունի նպատակ, ինքնասպանության մասին չի մտածի», ասում է Էլդա Գրինն ու ընդգծում, որ հայաստանյան հասարակությունը 2 մեծ խմբի է բաժանվել: Առաջին խումբը կազմվել է հարուստներից, որը բնակչության թվի համեմատությամբ փոքր տոկոս է կազմում: Իսկ երկրորդ խմբում ընդգրկված բնակիչներն այն մարդիկ են, որոնք հազիվ են գոյատեւում: «2-րդ խմբում ավելացնում եմ նաեւ նրանց, որոնք անգամ հացի փող չունեն ու աղբարկղերն են փորփրում»: Եթե անգամ հոգեբանները չբարձրաձայնեն սոցիալական նման պատկերի մասին, դժվար չէ հասկանալ, որ ցածր կենսամակարդակ ունեցող հասարակությունում նեւրոզով ու դեպրեսիայով հիվանդները միանշանակ ավելանալու են:

Ինքնասպանություն գործած մարդկանց մեջ քիչ չեն եղել եւ դեպրեսիայով հիվանդները: Սակայն դեպրեսիայի մեջ ընկնում եւ ինքնասպանության են դիմում նաեւ սոցիալապես ապահով երկրների բնակիչները՝ շվեդները, նորվեգացիները եւ այլն:

«**Ազգի**» հարցին՝ ի՞նչն է պատճառը, որ ինքնասպանություններն ավելացել են նաեւ զարգացած երկրներում, Էլդա Գրինը պատասխանեց. «Մարդիկ հիմա հուսահատված են: Օրինակ՝ Միացյալ Նահանգներում մարդիկ մեծ հույսեր էին կապում Բարաք Օբամայի հետ, սակայն թերթերը գրում են, որ Օբաման էլ անում է նույնը, ինչ անում էր Բուշը: Մարդիկ նման բաներից էլ են հուսահատվում»:

Մարդկանց հոգեբանությունը ձեւավորվում է նաեւ տվյալ երկրի ավանդույթների ու պահանջների համաձայն: Եթե Հայաստանում երեխայի բուհ չընդունվելը ծնողների ու դիմորդի համար ծանր սթրես է, ապա Ճապոնիայում սթրեսները սկսվում են ընդունվելուց հետո: Ճապոնացիներն իրենց ուսանող երեխաների հանդեպ խստապահանջ են, այնտեղ ուսանողները պետք է շատ լավ սովորեն: Իսկ երբ ուսանողը չի կարողանում արդարացնել ծնողների ու հարազատների սպասելիքները, ընկնում է դեպրեսիայի մեջ: Այսինքն՝ կախված երկրի մենթալիտետից՝ դեպրեսիայի առաջացման պատճառները տարբեր են լինում:

Ապա նորից անդրադառնալով ինքնասպանության դեպքերին՝ Էլդա Գրինը նշեց, որ ինքնասպանություն գործում են նաեւ ֆանատիկները՝ իրենց «հավատից» դրդված: Նույնիսկ կան մարդիկ, որոնք դիմում են ինքնասպանության, որպեսզի «այլ աշխարհում» հանդիպեն իրենց մահացած հարազատներին: Հոգեբանի փոխանցմամբ՝ աղանդավորների մեջ եւս լինում են ինքնասպանության դեպքեր. «Նույնիսկ որոշ աղանդներում ինքնասպանությունը խրախուսվում է»: Անշուշտ, սա սարսափելի փաստ է, ու աղանդների կործանարար գաղափարախոսությունն, իսկապես, մարդկանց կյանք է խլել, սակայն նաեւ հաշվի առնենք, որ կան մարդիկ, որոնք համալրում են աղանդավորների շարքերն արդեն իսկ ծանր հոգեկան վիճակում: Աղանդի գաղափարախոսությունը կարող է ինքնասպանության առիթ դառնալ, սակայն միշտ չէ, որ դեպրեսիայի կամ ինքնասպանության իրական պատճառը լինում է այդ գաղափարախոսությունը:

Էլդա Գրինի խոսքով՝ ինքնասպանության դեպքեր ավելի շատ գրանցվում են դեռահասների շրջանում: Ինչ վերաբերում է բանակում կատարվող ինքնասպանության դեպքերին, Էլդա Գրինը դրանց պատճառներից առանձնացնում է բանակում գործող չգրված օրենքները, «որոնք դաժան են ու ահավոր»:

Ինքնասպանության առիթներից, պատճառներից խոսելուց հետո բանախոսը նշեց, որ ընդհանուր առմամբ՝ ինքնասպանությունը կանխելն հնարավոր է: Բացի հոգեբանի ու հոգեթերապեւտի միջամտությունից՝ Էլդա Գրինը կարեւորեց նաեւ հարազատների, տան անդամների աջակցությունը. վերջիններիս հոգատար վերաբերմունքն ու ուշադրությունը կարեւոր են յուրաքանչյուր մարդու համար:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## Այս տարի կավելանան խաղողի մթերման ծավալները

### Իսկ Երեւանում կբացվեն գյուղմթերքների իրացման տոնավաճառներ



Գյուղատնտեսության փոխնախարար **Ռոբերտ Մակարյանը** երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց, որ 2010-ին գյուղացիական տնտեսություններից մթերվել է 135 հազար տոննա խաղող եւ վճարվել մոտ 17 մլրդ դրամ: 2011-ին, ըստ վերամշակող ընկերությունների, կմթերվեն 144-155 հազար տոննա խաղող, 30 հազար տոննա բանջարեղեն, որից 24 հազար տոննա պոմիդոր:

Փոխնախարարի տեղեկացմամբ, հունիսի 1-ի դրությամբ գյուղացիական տնտեսություններին պարտք էր մնացել 3 ընկերություն՝ «Գրեյթ Վելլի», «Արփա Ալկոն» եւ «Արենին»: Սակայն, ըստ Ռոբերտ Մակարյանի, այսօր արդեն նրանք էլ մարել են այդ պարտքը: Նա նաեւ հավաստիացրեց, որ պայմանագրի որեւէ կետ խախտելու կամ պարտքերը չվճարելու դեպքեր այլեւս չեն կրկնվի, քանի որ խնդիրը անմիջապես նախարարի հսկողության տակ է:

Ռոբերտ Մակարյանը տեղեկացրեց նաեւ, որ շաբաթ-կիրակի օրերին Երեւանում կգործեն գյուղմթերքների իրացման տոնավաճառներ այդ նպատակով հատկացվող երեք տարածքներում, որտեղ գյուղացիներն իրենց արտադրանքը կվաճառեն առանց միջնորդի:

Ա. Մ.

## Խրախուսում ազգային բանակում ծառայած ուսանողներին

Երեկ կառավարության նիստում հաստատվեց կրթության, գիտության նախարար **Արմեն Աշոտյանի** ներկայացրած «Բանակից զորացրված, բակալավրական կրթություն ստացած եւ մագիստրոսական կրթության ուսումը շարունակելու ցանկություն ունեցողների համար» հատուկ որոշման նախագիծը: Նախարարը հիշեցրեց, որ արդեն մի քանի տարի մեր երկրում գործում է բանակից զորացրված ուսանողների համար բակալավրական կրթության մակարդակում՝ պետական պատվերը: Այս տարվանից նախարարության առաջարկով ընդունվեց եւս մեկ սոցիալական փաթեթ՝ բանակից զորացրված երիտասարդների համար, որով նախատեսվում է անվճար մագիստրոսական կրթության հնարավորություն այն ուսանողների համար, որոնք ավարտել են բակալավրական մակարդակը, ծառայել են հայոց բանակում եւ զորացրվելուց հետո ունեն ցանկություն շարունակելու կրթությունը: Իսկ թե ինչով է պայմանավորված այդ որոշումը՝ «**Ազգի**» հարցին նախարարը պարզաբանեց. «Շատ հաճախ որոշ շրջանակներ փորձում են հակադրել կրթությունն ու բանակը, պատճառաբանելով, որ զինծառայությունը խանգարում է կրթությանը, սահմանափակում է հնարավորությունները, չի նպաստում Հայաստանում կրթական համակարգի զարգացմանը եւ այլն: Իրականում դա այդպես չէ»: Եվ որպես խրախուսում այս տարի առաջին անգամ պետպատվերի շրջանակներում 99 անվճար տեղ է տրամադրվել բանակից զորացրված բակալավրական կրթություն ունեցող երիտասարդների համար, որոնք կընդունվեն առանձին մրցութային կարգով, եւ նրանց համար փաստաթղթերի ընդունումը երկարաձգվել է մինչեւ օգոստոսի 25-ը: Վարչապետի հանձնարարականով մագիստրատուրայի տեղերն ավելացել են 25-30 տոկոսով՝ մինչեւ 125-130 տեղ: Այս նոր որոշումը եւ արտոնությունը չեն վերաբերում այն ուսանողներին, ովքեր դուրս են մնացել բուհից բացակայության, կարգապահական տույժերի, վատ առաջադիմության պատճառով: Իսկ տարկետման իրավունք վերցրածները կարող են օգտվել այս որոշումից, տեղեկացրեց Արմեն Աշոտյանը: Իսկ այն ուսանողները, ովքեր վճարովի հիմունքներով են ընդունվել ու մեկնել են բանակ, զորացրվելուց հետո պետք է վճարովի ավարտեն բակալավրական կրթությունը, նոր միայն օգտվեն անվճար մագիստրատուրական հատկացված տեղերից:

Կառավարության մեկ այլ որոշմամբ՝ Րաֆֆու թիվ 36 հիմնական դպրոցից հատկացվեց տարածք կրթության նախարարության պետական տեսչությանը, որը զբաղեցնում էր Երեւանի կինոյի եւ թատրոնի ինստիտուտի շենքում մի հատված: Ինստիտուտի այդ տարածքը կհանձնվի ինստիտուտին, որպեսզի լիարժեք իրականացվեն բուհի զարգացման ծրագրերը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

## «Նաիրիտի» հարցը կառավարությունում

### Իսկ գործարանի աշխատակիցները հավաքվել էին նախագահի նստավայրի մոտ

«Նաիրիտի» աշխատակիցները երեկ իրենց դժգոհությունն էին հայտնում նախագահական նստավայրի մոտ: Դժգոհության պատճառը դարձյալ աշխատավարձի պարտքերն են: Արդեն 4-րդ ամիսն է՝ գործարանի աշխատակիցները աշխատավարձ չեն ստանում: Նախագահականում նրանց հավաստիացրել են, որ աշխատավարձերի պարտքը կմարվի առաջիկա 15 օրերի ընթացքում:

«Նաիրիտի» խնդրին կառավարության նիստում անդրադարձավ նաեւ վարչապետ **Տիգրան Սարգսյանը**: Դիմելով էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանին, վարչապետն ասաց, որ մարդկանց մտահոգությունը փարատելու լավագույն ձեւն օբյեկտիվ տեղեկատվության տրամադրումն ու թափանցիկության ապահովումն է: «Վերջին շրջանում ակնհայտորեն ինչ-որ մարդիկ ուզում են այս ոլորտում ինչ-որ պատմություններ ստեղծել, վարկաբեկիչ հոդվածներ են գրում, ուղղորդում մարդկանց: Դրա դեմ պայքարելու լավագույն ձեւն առավել թափանցիկ տեղեկություն տրամադրելն է: Կարծում եմ, նաեւ կոլեկտիվին դա կհանգստացնի: Այսօր «Կապիտալ» թերթը նույնպես անդրադարձել էր «Նաիրիտի» խնդրին, էլի հարցականներով: Այդ բոլոր հարցականներին պետք է պատասխան տրվի: Հիմա լուրեր են տարածվում, թե իբր 2006 թվականին կառավարությունը «Նաիրիտը» սեփականաշնորհել է: Այդպիսի բան չի եղել: Սեփականատերերը եղել են մասնավոր, չորս սեփականատեր է փոխվել այդ գործարանում, եւ մշտապես լուրջ խնդիրներ են եղել, որոնք օբյեկտիվ պետք է ներկայացնել»:

Նախարարը պատասխանեց, որ «Նաիրիտի» հետ կապված ամբողջ տեղեկատվությունը տեղադրված է նախարարության կայքում: Նա մասնավորապես հայտնեց, որ գործարանի ձեռքբերմամբ հետաքրքրված են լեհական երեք ընկերություններ:

Սակայն հակառակ լրագրողների սպասումներին, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը, կառավարության նիստի ավարտից հետո չներկայացավ նախապես հայտարարված մամուլի ասուլիսին:

Ա. Մ.

## Գորիսը՝ զբոսաշրջության կենտրոն

Գորիս քաղաքը կառավարության որոշմամբ հայտարարվել է զբոսաշրջային կենտրոն: Ըստ այդմ, նախատեսվում է մինչեւ 2016 թվականը քաղաքը դարձնել միջազգային չափանիշներին համապատասխանող, շուրջ տարին գործող զբոսաշրջության կենտրոն, Տաթեւը, Խնձորեսկը, Հալիձորը, Քարահունջը, որտեղ ավելի լավ են պահպանվել Գորիսի շրջանին բնորոշ ավանդույթները, կենցաղը, բարբառը, խոհանոցը՝ վերածել ճանաչողական, կրթական նպատակներ եւ խնդիրներ առաջադրող մշակութային զբոսաշրջության կենտրոնների: Այդ առումով ծրագրի գերակա խնդիրներ են հայտարարվել քաղաքի ենթակառուցվածքների զարգացումը, ժայռափոր Գորիսի տարածքում տուրիստական հանգրվանի ստեղծումը, քաղաքի օդանավակայանի վերագործարկումը եւ այլն:

Ա. Մ.

# Ինչո՞ւ չեն բարձրաձայնում այս բռնակալների արարքների մասին

***Բահրեյնի բռնակալների վերաբերյալ համաշխարհային հռչակ վայելող լրագրող Ռոբերտ Ֆիսքի ստորեւ թարգմանաբար ներկայացվող հոդվածը տպագրվել է անգլիական «Ինդիփենդենտ» թերթի մայիսի 14-ի համարում: Բայց նախ մի հակիրճ տեղեկանք: Բահրեյնը պետություն է Ասիայում, Պարսից ծոցի հարավ-արեւմուտքում, բահրեյնյան կղզիների վրա: Տարածությունը 588.3 քառ. կմ է, բնակչությունը՝ հիմնականում բահրեյնցիներ, ասիացիներ եւ արաբներ: Մայրաքաղաքը՝ Մանամա: Կառավարությունը՝ ավանդական միապետություն: Երկար ժամանակ արաբական խալիֆայության իշխանության, 1861-ից բրիտանական խնամակալության ներքո գտնվելուց հետո 1971-ին հռչակվում է ինքնուրույն եւ անկախ պետություն: Արաբական երկրների լիգայի եւ ՄԱԿ-ի անդամ է:***

Հ. Ծ.

Նախկինում Մ. Նահանգների պետքարտուղարության աշխատակից (Արեւելյան Ասիայի հարցերով) եւ Իրաքում Ամերիկայի դեսպան Քրիստոֆեր Հիլը, որը շատ հնազանդ եւ ոչ պերճախոս ամերիկացի դիվանագետ է ընդհանուր առմամբ, գրել էր անցյալ օրը, որ «այլեւս անընդունելի է դառնում այն հասկացությունը, որ որեւէ բռնակալ իրեն իրավունք վերապահի ճնշելու իր ժողովրդին»:

Սա ճիշտ է անշուշտ, եթե խոսքը Բահրեյնի մասին չէ: Պրն Հիլը չի նշում այդ մասին, բայց այս փոքրիկ կղզում, որտեղ Խալիֆաների ընտանիքի սուննի փոքրամասնական միապետությունը իշխում է մեծ մասամբ շիա դավանանքի բնակչության վրա, ժողովրդավարական բողոքներն ավարտվում են սովորաբար մահվան դատապարտվելու, զանգվածային ձերբակալությունների, բժիշկների բանտարկության եւ սաուդյան զորքերին երկիր մուտք գործելու «հրավերի» տեսքով: Այդ մարդիկ նաեւ քանդել են շիաներին պատկանող տասնյակ մզկիթներ՝ 9/11-ի իրադարձություններին մասնակից օդաչուների հաստատակամությամբ: Չմոռանանք, որ 9/11-ի այդ ոճրագործների մեծամասնությունը սաուդցիներ էին:

Իսկ ի՞նչ ենք փոխարենը ստանում մենք: Լռություն: Բացարձակ լռություն Մ. Նահանգների եւ եվրոպական զանգվածային լրատվության կողմից: Լռություն նաեւ մեր սիրելի Քամեր Քլեգի (Camer Clegg) եւ իհարկե Սպիտակ տան կողմից: Եվ, ամոթ իրենց, արաբների կողմից, որոնք շատ լավ գիտեն իրենց շահերը պաշտպանել: Խոսքը նաեւ «Ալ Ջազիրայի» լռության մասին է անշուշտ: Ես հաճախ եմ հանդես գալիս նրանց այլապես հրաշալի հաղորդումներում, արաբերենով լինեն դրանք թե անգլերենով, բայց Բահրեյնի մասին նրանց լուռ մնալը ամոթալի երեւույթ է եւ ոչ վայել այն արժանավոր դիրքին, որ նրանք զբաղեցնում են Մերձավոր Արեւելքի իրադարձությունները մեկնաբանելու ոլորտում: Քաթարի (պետության) էմիրը, որին շատ լավ եմ ճանաչում, բոլորովին կարիք չունի այս ձեւով նսեմացնելու իր հեռուստատեսային կայուրության համբավը:

Քամեր Քլեգը լուռ է, որովհետեւ Բահրեյնը Պարսից ծոցի մեր «բարեկամներից» է, զենքի լավ գնորդ եւ հազարավոր բրիտանացի վտարանդիների «հայրենիքը»: Այդ վտարանդիները Բահրեյնի շիաների մինի հեղափոխության ժամանակ խալիֆայամետ լրատվամիջոցներին հղում էին թունդ նամակներ, որոնցում պախարակում էին արեւմտյան լրագրողներին: Ինչ վերաբերում է ցուցարարներին, հիշում եմ շիա մի կնոջ ասածն այն մասին, որ եթե արքայազնը բարեհաճեր գալ եւ խոսել նրանց հետ, ապա նրանք «իրենց ուսերի վրա կպահեին նրան»: Բայց նա այդպես էլ չեկավ բանակցելու: Փոխարենը՝ քանդեց նրանց բոլոր մզկիթները եւ հայտարարեց, որ ցույցը իրանյան դավադրության մի մասն էր, որը բոլորովին չէր համապատասխանում իրականությանը:

Օբաման, ինչ խոսք, իր պատճառներն ունի լռելու: Բահրեյնում է գտնվում Մ. Նահանգների 5-րդ նավատորմը, եւ ամերիկացիները չէին ցանկանա դուրս քշվել այդ փոքրիկ վայրից (չնայած շատ հանգիստ նրանք կարող են տեղափոխվել Արաբական Միացյալ Էմիրություններ կամ Քաթար) պաշտպանելու համար Բահրեյնը իրանական առասպելական նախահարձակումներից: Այնպես որ տիկին Քլինթոնին չենք տեսնի Ասադի ընտանիքին նախատելիս կամ Խալիֆաներին վատաբանելիս:

Բայց ինչո՞ւ: Մի՞թե մենք բոլորս պարտական ենք Պարսից ծոցի արաբներին: Նրանք հարգարժան մարդիկ են եւ կհասկանան, եթե քննադատությունը կառուցողական է եւ բարեխղճորեն կատարված: Բայց ոչ, մենք լռում ենք, նույնիսկ երբ Մեծ Բրիտանիայում Բահրեյնից ժամանած ուսանողներին զրկում են թոշակներից Լոնդոնի իրենց դեսպանատան առաջ բողոքի ցույց կազմակերպելու համար, (ամո՛թ ձեզ, Քամերուն եւ Քլեգ):

Բահրեյնը երբեք Արեւմուտքի «բարեկամ» լինելու համբավը չի վայելել: Բայց որպես այդպիսին է ներկայացվում կամ ցանկանում է, որ ներկայացվի: Ավելի քան քսան տարի առաջ որեւէ մեկը եթե բողոքեր արքայական ընտանիքի իշխանության դեմ, կդատապարտվեր կտտանքների անվտանգության մարմինների տեղամասերում, որոնց պետը նախկին բրիտանացի, «հատուկ բաժնի» ոստիկան էր: Այս վերջինիս գլխավոր «տանջողը» հորդանանյան բանակում ծառայող վատահամբավ մայոր էր: Երբ ես նրանց անունը հրապարակեցի, կառավարական «Էլ Խալիջ» թերթում հայտնվեց մի ծաղրանկար, որտեղ ինձ կատաղած շան տեսքով էին ներկայացրել: Դա անշուշտ սպառնալիք էր, քանի որ բոլորս գիտենք, որ կատաղած շներին ոչնչացնում են:

Ալ Խալիֆաների գերդաստանը խնդիրներ չունի ընդդիմադիր «Ալ Ուասատ» թերթի հետ: Ապրիլի 5-ին նրանք ձերբակալեցին դրա հիմնադիրներից մեկին՝ Քերիմ Ֆախրաուիին, որը մեկ շաբաթ անց մահացավ ոստիկանական տեղամասում: Տասը օր անց նրանք ձերբակալեցին թերթի սյունակագիրներից մեկին՝ Հեյդար Մոհամմեդ էլ Նաիմիին, որին դրանից հետո ոչ ոք չի տեսել այլեւս: Այս մասին էլ լռություն է տիրում ինչպես Քամեր Քլեգի, Օբամայի, տիկին Քլինթոնի, այնպես էլ մյուս բոլորի կողմից: Շիա մահմեդական բժիշկների ձերբակալումը եւ նրանց հանդեպ դատական գործ հարուցելը՝ իբր իրենց հիվանդների մահվան պատճառ դառնալու մեղադրանքով (իրականում «անվտանգության մարմինները» նրանց սպանել էին) առավել նողկալի է: Ես հիվանդանոցում էի, երբ այդ «հիվանդներին» բերեցին: Բժիշկների հակազդեցության մեջ նկատելի էր ե՛ւ սարսափը, ե՛ւ վախը: Նրանք երբեք չէին տեսել վերքեր, որոնք այդքան մոտիկից կատարված կրակոցներից էին առաջացել:

Այժմ նրանք էլ են ձերբակալված: Եթե նման բան պատահեր Դամասկոսում, Հոմսում, Համայում կամ Հալեպում, Քամեր Քլեգի, Օբամայի եւ տիկին Քլինթոնի ձայները անընդհատ հնչած կլինեին մեր ականջներում: Բայց ոչ, հարկավոր է լռությունը պահպանել: Չորս մարդ մահվան է դատապարտված այժմ բահրեյնցի երկու ոստիկանների սպանության մեղադրանքով: Դատավարությունը փակ էր, «խոստովանությունները» եթեր արձակվեցին հեռուստատեսությամբ, խորհրդային ոճով: Ոչ մի խոսք չլսվեց Քամեր Քլեգի, Օբամայի կամ տիկին Քլինթոնի կողմից:

Թե ի՞նչ է թաքնված այս անհեթեթության հետեւում, ասեմ: Դա բոլորովին կապ չունի Բահրեյնի կամ Խալիֆաների գերդաստանի հետ: Խնդիրը Սաուդյան Արաբիան է: Մեր վախը Սաուդյան Արաբիայից, որը նշանակում է մեր կախվածությունը այդ երկրի նավթից: Մենք պետք է մոռանանք, որ 9/11-ի դեպքերը կատարվեցին հիմնականում սաուդցիների կողմից, պետք է մոռանանք, որ Սաուդյան Արաբիան պաշտպանում է թալիբներին, որ բեն Լադենն ինքը սաուդցի էր, որ իսլամի ամենավայրագ տարբերակի հայրենիքը Սաուդյան Արաբիան է, որտեղ գլուխներ եւ ձեռքեր են կտրում «հանցագործությունների» համար:

Վերջերս բահրեյնցի պաշտոնական մի անձի (շատ քաղաքավարի ու պարկեշտ մի մարդ) զրույցի ժամանակ հարցրեցի, թե ինչու բնակչության շիա մեծամասնության կողմից ընտրված մեկը չի կարող վարչապետ դառնալ: «Սաուդցիները նման բան երբեք թույլ չեն տա», ասաց նա:

Այո՛, մեր մյուս բարեկամները սաուդցիներն են:

**Թարգմ. Հ.Ծ.**

# Եգիպտոսը՝ հերթական ահազանգ քրիստոնյաներին

Արաբական հեղափոխությունները հայերիս թերեւս առաջին հերթին հետաքրքրում են այն առումով, գուցեեւ՝ զգացմունքային, թե ինչ փոփոխությունների կենթարկվի վերաբերմունքը այդ երկրներում ապրող մեր հայրենակիցների նկատմամբ: Թեեւ բոլորս ենք հասկանում, որ աշխարհաշրջանում տեղի ունեցող ցնցումները գլոբալ բնույթ են կրում եւ էական ազդեցություն կունենան համաշխարհային գործընթացների վրա:

Ըստ երեւույթին իրականանում են մռայլ կանխատեսումները Մերձավոր Արեւելքի իսլամականացման վերաբերյալ: Արդեն տեւական ժամանակ իսլամական աշխարհը Արեւմուտքի շատ գործողություններ ու հատկապես ԱՄՆ-ի ներխուժումները Աֆղանստան ու Իրաք, Լիբիայի ռմբակոծումները դիտում է որպես նորօրյա խաչակրաց արշավանքներ ընդդեմ իսլամի, ինչն էլ ի պատասխան հարուցում է իսլամապաշտության հետագա արմատականացման եւ հակաքրիստոնեական անհանդուրժողականության բռնի դրսեւորումներ: Այլ խոսքով ասած, ամբողջ մի աշխարհամաս սկսում է «մաքրվել» քրիստոնյաներից:

Նկատի ունենալով, որ Եգիպտոսը արաբական աշխարհի խոշորագույն պետությունն է եւ նորաթուխ հեղափոխությունների «օրրանը», ռուսաստանյան մամուլը մեծ ուշադրությամբ է հետեւում հենց այդ երկրում տեղի ունեցող փոփոխությունների էվոլյուցիային: «2011-ի արաբական գարունը, գրում է մոսկովյան թերթերից մեկը, թերեւս կրկնում է պատմության դասագրքերից մեզ հայտնի շատ հեղափոխությունների ճակատագիրը: Բռնապետի ճնշումից ազատագրվելու հույսերը փոխարինվում են ամենաարմատական հեղափոխականների էլ ավելի դաժան ճնշումով: Հունվարին աշխարհով մեկ սփռվեցին Կահիրեի Թահրիր ալեկոծվող հրապարակի լուսանկարները, որտեղ ազատության ակնկալիքից արբած մուսուլմաններն ու քրիստոնյաները միասին էին պահանջում Մուբարաքի հրաժարականը: Իսկ արդեն այսօր եգիպտական հասարակության մի մասը դառնում է մյուս մասի զոհը: Վերհիշվում է Դանտոնի նշանավոր խոսքը, որ հեղափոխությունը խժռում է իր զավակներին:

Արդ, ինչ են ցույց տալիս սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները հեղափոխական, իբր դեմոկրատական փոփոխությունների շեմին կանգնած Եգիպտոսում: Եգիպտացիների 31 տոկոսը պաշտպանում է իսլամական ֆունդամենտալիստներին, 60 տոկոսը կողմ է, որ պետության օրենքները համապատասխանեն Ղուրանի կանոններին: Բնակչության 37 տոկոսը անվերապահ աջակցում է «Մուսուլման եղբայրներ» շարժման՝ այժմ արդեն նաեւ բացահայտ քաղաքական գործողություններին: Երկրի, չասենք դեմոկրատական, այլ աշխարհիկ կարգերը պահպանելու կողմնակիցները (38 տոկոս) իսլամիստների դեմ իրենց պայքարով հասան այն բանին, որ հիմնական իսլամիստական ուժերը («Մուսուլման եղբայրներ», սալաֆիտներ եւ այլ) պատրաստակամություն են հայտնել մի կողմ դնել կրոնական-գաղափարական տարաձայնությունները եւ միասնական ճակատով հանդես գալ առաջիկա խորհրդարանական ընտրություններում: Սա նշանակում է, որ նրանք իրապես կարող են հավակնել պատգամավորական տեղերի մինչեւ 50 տոկոսին:

Իսկ հիմա ամենացավալիի մասին, որ հենց այդպես էլ ներկայացնում է ռուսաստանյան մամուլը: Խոսքը վերաբերում է հսկա աշխարհամասից քրիստոնյա ազգային փոքրամասնությունների արտագաղթին: Եգիպտոսի ամենամեծ քրիստոնեական համայնքը ղպտիներն են: Եվ «հեղափոխությունից» հետո իսլամիստների հարձակումների, իսկ ավելի ճիշտ՝ ահաբեկչական գործողությունների զոհը դառնում են հենց նրանք: Տասնյակ սպանվածներ, հարյուրավոր վիրավորներ, հրկիզված եկեղեցիներ, տներ, ավտոմեքենաներ, խանութներ:

Ղպտիների խաղաղ հանրահավաքները գնդակոծվում են, կիրառվում է նաեւ սառը զենք: Իսլամիստների եւ քրիստոնյաների անողոք բախումներ են տեղի ունենում ոչ միայն երկրի մայրաքաղաք Կահիրեում, այլեւ՝ նահանգներում: Ինչպես հաճախ է պատահում, հակաքրիստոնեական հարձակումներին մասնակցում են կրոնին առնչություն չունեցող անձինք՝ քրեական տարրերը: Ղպտիների ողբերգությունը, առանց չափազանցության, համապարփակ է դառնում, եթե նկատի ունենանք, որ նրանք հին եգիպտացիների անմիջական հետնորդներն են, այսինքն՝ որպես «այլադավան» նրանք բռնությունների են ենթարկվում իրենց պատմական հայրենիքում: Իսկ ինչ երաշխիքներ կարող են ունենալ մյուս ազգային քրիստոնեական փոքրամասնությունները, այդ թվում՝ նաեւ հայերը:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Թուրքիան՝ քվեարկության նախաշեմին

*Հեռանկարում կամ նախագահական Թուրքիան է, կամ ներկայիս իրավիճակի ամրապնդումը*

Թուրքիայի համար ճակատագրական, վճռորոշ որակվող խորհրդարանական ընտրություններն այս շաբաթ վերջապես կհասնեն բուն քվեարկությանը: Ամենայն հավանականությամբ ընտրողների գրեթե կեսը ընտրատեղամասեր կգնա ամրագրելու Թուրքիայի ներկայիս վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության վարկանիշը առնվազն մոտ 50 տոկոս տեսնելու արդյունքը: Ու չնայած այդ հեռանկարի ֆոնին ընտրությունների ելքը կանխորոշված է թվում, դեռեւս հարցական է իշխող կուսակցության ստանալիք ձայների քանակը, ինչն էլ, ըստ էության, հունիսի 12-ի ընտրությունների հիմնական կռվախնձորն է:

Երկրի 70 մլն-ից ավելի բնակչության առնվազն մեկ քառորդը ներկայացնող Ստամբուլի հանրահավաքային հրապարակ Թաքսիմը վերջին շաբաթվա ընթացքում այդպես էլ ցույցեր չտեսավ, դրա փոխարեն կուսակցությունների քարոզարշավային ակտիվությունը քաղաքի տարբեր, հատկապես կենտրոնական հատվածներում շարունակում է արտահայտվել կուսակցական խորհրդանիշներով ու լիդերների պաստառներով գրիչներ, գլխարկներ, անգամ կոնֆետներ բաժանելու ակցիաներով:

Այս ամենի հետ մեկտեղ քաղաքի շենքերի մեծ ու փոքր պատերը ծածկող պաստառները, բարձր երաժշտությամբ իրենց երթեւեկն իրականացնող քարոզչական ավտոբուսները լրացնում են նախընտրական իրավիճակը Ստամբուլում:

Երրորդ սահմանադրությամբ առաջնորդվող, բայց նորը՝ չորրորդն ունենալու համար խորհրդարանական որակական մեծամասնության համար պայքարող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության բացահայտ լիդերության կողքին քվեարկությամբ մոտ 20-30 տոկոս ստանալու հնարավորություն ունի հիմնական ընդդիմադիր մնացած Ժողովրդա-հանրապետական կուսակցությունը, իսկ Ազգայնական շարժում կուսակցությունը, որի ընտրազանգվածը գնահատվում է 9-11 տոկոս, կարող է հայտնվել խորհրդարանից դուրս՝ չհաղթահարելով 10-տոկոսանոց շեմը, որն աշխարհում ամենաբարձր խորհրդարանական շեմերից է, որ Թուրքիայում, տարբեր գնահատականներով, առավելապես ծառայեցվում է քրդերին խորհրդարանից դուրս թողնելուն:

Ըստ էության, հենց այս ընտրազանգվածի ձայների համար էլ գնում է վերջին օրերի ընտրապայքարը իշխող եւ հիմնական ընդդիմադիր կուսակցությունների միջեւ: Սրան ի պատասխան էլ քրդերը նախընտրում են օրենսդիր մարմնում հայտնվել մեծամասնական ընտրակարգով: Իսկ թե ինչու քուրդ բնակչության բավականին ծանրակշիռ թվաքանակ ունեցող Թուրքիայում քրդական կուսակցությունը կարող է անգամ 10-տոկոսանոց պատնեշը չհաղթահարել, Մարմարայի համալսարանի պրոֆեսոր, ընտրական համակարգերի մասնագետ Օմեր Ֆարուք Գենչքայան բացառում է քրդական ինքնությունը մեջտեղ բերող կուսակցության նոր լինելու հանգամանքով:




550 պատգամավորական տեղերով թուրքական խորհրդարան մտնել ցանկացող կուսակցությունների նախընտրական բանավեճում առաջին տեղում, բնականաբար, սահմանադրության հարցն է, ապա էթնիկ ու քրդական խնդիրները, նաեւ սոցիալ-տնտեսական խնդիրներն ու ԵՄ հետ հարեւանության հեռանկարը, որի համատեքստում էլ դիտարկվում է նաեւ Թուրքիայի համար ցավոտ մի հարց՝ Կիպրոսի հիմնախնդիրը: Հայկական հարցն այս համատեքստում բավականին համեստ տեղ է գրավում, սակայն, ըստ պրոֆեսոր Գենչքայայի, հետընտրական շրջանում էլ փոփոխությունների առանձնակի ակնկալիքներ չպետք է ունենալ:

### Մեկ հայը թուրքական խորհրդարանում հարց չի լուծի

Քարոզչության հարցում ակնհայտորեն իրենց ներդրումն ունեն նաեւ թուրքական լրատվամիջոցները, որոնց որոշ ներկայացուցիչներ ամենայն հանգստությամբ ներկայանում են որպես իշխանամետ: Առանձնակի թաքցնելու բան էլ չեն տեսնում, հավաստիացնելով, որ որեւէ հեռուստաընկերություն Թուրքիայում չի կարող իրեն թույլ տալ հայտարարել, թե անկախ է կամ անկողմնակալ:

Ամեն դեպքում, իշխանության համար զուտ լրատվական գործունեությամբ իր ծառայությունները ներկայացնելու նպատակով ստեղծված «Հաբեր-Ա» հեռուստաալիքի իշխանամետ կեցվածքի կողքին այդպիսին չլինելու, ավելին «ձայն չունեցողներին ձայնի հնարավորություն» տալու մասին են խոսում «IMC» հեռուստաընկերությունում: Այս հեռուստաընկերությունում աշխատանքի անցած «Ակօս» թերթի պատասխանատու խմբագիր Արիս Նալջըն հավաստիացնում է, որ անգլիական, գերմանական ու թուրքական ընկերությունների ստեղծած այս հեռուստաալիքը արդեն վեցուկես ամիս փորձում է Թուրքիայում նաեւ հարեւանների հետ կապերը ներկայացնել:

Հայ ինքնության մասին բարձրաձայնելու առումով Նալջըն նշում է, որ հայկական ծագման մասին գնալով ավելի շատ մարդ է խոսում: Բայց դա էլ դեռ բավարար չէ, որ թուրքական խորհրդարանում հայ թեկնածու հայտնվի: «Հայ համայնքը դեռ պատրաստ չէ դրան, իսկ Թուրքիան կարող է պատրաստ լինել հայ պատգամավոր ունենալուն, քանի որ 550 պատգամավորի մեջ մեկ հայը հարց չի լուծի»: Ասել է թե Թուրքիան ոչ թե պատրաստ է, այլ առանձնակի չի մտահոգվում հայ պատգամավոր ունենալու հեռանկարից: Բայց 550 պատգամավորի մեջ մեկ հայն էլ պետք է նախ գիտուն լինի, քաջ, «այլապես մեկը կարող է հարցնել՝ ցեղասպանություն եղե՞լ է, ու ինչ պիտի լինի պատասխանը»:

Իհարկե, կա լուծում, գոնե անկախ պատգամավորի եւ ոչ թե որեւէ կուսակցության ցուցակով ընտրության գնալու ճանապարհով, բայց դա էլ հստակ չէ, թե ինչպես պետք է իրականացվի: Ամեն դեպքում, թեկուզ քվեարկողների թվաքանակի մեծացման ու այդ կերպ հայ թեկնածու անցկացնելու ճանապարհներից մեկն էլ, ըստ Նալջըի, Թուրքիայի քաղաքացիության օրենքի համաձայն այդ երկրի քաղաքացու հետնորդների համար թուրքական անձնագիրն ստանալու, այդպիսով՝ ընտրելու իրավունք ստանալու ուղին է: Բայց, ինչպես հավաստիացնում է Արիս Նալջըն, Թուրքիայից դուրս թուրքական անձնագիր ստացող հայեր բավականին կան, բայց նրանք ընտրություններին չեն գալիս ու չեն մասնակցում:

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Ստամբուլ, Թուրքիա**

**Հ.Գ. Նյութը պատրաստվել է Երեւանի մամուլի ակումբի, «Եվրասիա» համագործակցության հիմնադրամի եւ թուրքական «GPOT» կենտրոնի կազմակերպած Նախընտրական լրագրողական ծրագրի շնորհիվ:**

# Կանխորոշված է վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության հաղթանակը

Հունիսի 12-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի ընտրություններն են: Ինչ վերաբերում է ընտրողներին, ապա նրանց թիվը 74-միլիոնանոց Թուրքիայում ավելի քան 50 մլն 100 հազար է: Ընտրություններին կմասնակցեն քաղաքական 15 կուսակցություններ: Սակայն նրանցից Մեջլիս մուտք գործելու հնարավորություն ունեն միայն վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի իսլամամետ «Արդարություն եւ բարգավաճում», Քեմալ Քըլըչդարօղլուի Ժողովրդա-հանրապետական, «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության Ազգայնական շարժում եւ քրդերի «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունները: Ի դեպ, վերջինս ընտրություններին մասնակցում է մեծամասնական ընտրակարգով միայն:

Ի սկզբանե ընտրություններում Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության հաղթանակը կասկած չէր հարուցում: Թերեւս այդ գիտակցությամբ է, որ Մեջլիս մուտք գործելու հնարավորություն ունեցող կուսակցությունները միջկուսակցական պայքար ծավալելու փոխարեն միավորվել եւ սկսել են պայքարել Էրդողանի կուսակցության դեմ, ինչը դարձավ քարոզարշավի առանձնահատկությունը:

Գալով հունիսի 12-ի ընտրություններին, ապա դրանց առանձնահատկությունն էլ լինելու է Էրդողանի կուսակցության հաղթանակի նախապես կանխորոշվածությունը: Այլ կերպ, ընտրություններում մյուս կուսակցությունները իշխանության գալու առաջադրանք չունեն: Նրանք պայքարում են 550-տեղանոց Մեջլիսում Էրդողանի կուսակցության պատգամավորական տեղերը հնարավորինս սահմանափակելու, ինչպես նաեւ 2007-ի նախորդ ընտրությունների համեմատ ավելի շատ տեղեր ստանալու համար:

Եթե Դեւլեթ Բահչելիի Ազգայնական շարժում կուսակցությունը չբախվի 10 տոկոսի պատնեշին, որը ամենեւին չի բացառվում, ապա քաղաքական ուժերի հարաբերակցությունն ընդհանուր գծերով կպահպանվի Մեջլիսում: Թվակազմով 2-րդ խմբակցությունը նորից կունենա Ժողովրդա-հանրապետականը, որին պատգամավորական տեղերի քանակով կհաջորդեն Ազգայնական շարժում եւ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունները:

Հակառակ այս կուսակցությունների, Էրդողանի կուսակցությունը իր առջեւ Մեջլիսում 367 պատգամավորով ներկայանալու խնդիր է դրել: Դա բացարձակ մեծամասնություն է եւ Էրդողանին տալիս է առանց հանրաքվեի հենց Մեջլիսում նոր սահմանադրություն ընդունելու հնարավորություն: 330 պատգամավորական տեղեր ունենալու պարագայում եթե մյուս խմբակցությունները դեմ էլ քվեարկեն, Էրդողանի կուսակցությունը իրավունք է ստանում հանրաքվեի դնելու այդ սահմանադրությունը, իսկ 267 պատգամավորական տեղերը նրան ապահովում են միանձնյա իշխանություն:

Կհաջողվի՞ վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությանը Մեջլիսում ստանալ 367 պատգամավորական տեղեր, ցույց կտա հունիսի 12-ի ընտրությունների արդյունքը: Համենայն դեպս, ամփոփելով տարբեր հարցախույզերի արդյունքները, կարելի է ենթադրել, որ ընտրություններում «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը կստանա ընտրողների ընդհանուր ձայների առնվազն 46 տոկոսը, Ժողովրդա-հանրապետականը՝ շուրջ 26 տոկոս, Ազգայնական շարժումը՝ մինչեւ 10,5 տոկոս, իսկ ընտրություններին մեծամասնականով մասնակցող «Խաղաղություն եւ ժողովրդավարությունը»՝ ավելի քան 7 տոկոս, ինչը վերջինին կապահովի պատգամավորական 25-ից ավելի տեղեր եւ կուսակցությունը խմբակցություն կազմելու իրավունք կունենա:

**Հ. ՉԱՔՐՅԱՆ**

ԼԻԲԻԱ

# ՄԱԿ-ի ԱԽ բանաձեւը գուցե թույլատրում է սպանե՞լ Քադդաֆիին



**Լիբիայի վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ ընդունած բանաձեւը թույլատրում է հարվածներ հասցնել անմիջականորեն Մուամմար Քադդաֆիին: CNN հեռուստաալիքի եթերում նման հայտարարություն է արել ՆԱՏՕ-ի բարձրաստիճան ներկայացուցիչներից մեկը՝ չցանկանալով հրապարակել իր անունը:**

**Հյուսիսատլանտյան դաշինքի ներկայացուցիչներն առաջին անգամ են այսպիսի հայտարարություն անում: Լիբիայում ռազմական գործողությանը մասնակցող երկրները մինչեւ վերջերս պնդում էին, թե իրենց օդուժի թիրախը ռազմական օբյեկտներն են, այլ ոչ թե կոնկրետ մարդիկ: Ի դեպ, ՄԱԿ-ի ԱԽ մարտի 17-ի բանաձեւում գրված է, որ համաշխարհային ընկերակցությունը կարող է «բոլոր անհրաժեշտ միջոցները» ձեռնարկել (բացի ցամաքային ներխուժումից) Լիբիայի խաղաղ բնակչությանը պաշտպանելու համար:**

**Վերջին օրերին Լիբիայի մայրաքաղաք Տրիպոլին ենթարկվում է հատկապես ուժգին օդային հարվածների: Քադդաֆիի կառավարության պաշտոնական ներկայացուցչի խոսքերով, միայն հունիսի 7-ին ՆԱՏՕ-ի ռազմօդանավերը 60-ից ավելի ռումբ են նետել. դրա հետեւանքով զոհվել են 31 եւ վիրավորվել տասնյակ մարդիկ: Օդային հարվածները հասցվում են հիմնականում Քադդաֆիի նստավայրին, ինչպես նաեւ Տրիպոլիից օդանավակայան տանող խճուղուն:**

**Միաժամանակ Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ այսպես կոչված «Շփման խմբի» 22 երկրները (ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Հորդանան, Քաթար, ԱՄԷ եւ այլն) Աբու Դաբիում կայացած հանդիպման ժամանակ լիբիական ընդդիմությունից պահանջել են ներկայացնել գործողությունների մանրամասն ծրագիր՝ ի դեմս Քադդաֆիի կամավոր կամ հարկադիր պաշտոնանկության: Խմբի երկրները խոստացել են ընդդիմությանը ավելի քան 1 մլրդ դոլար հատկացնել Քադդաֆիի վարչակարգի դեմ պայքարելու համար: Մասնավորապես Իտալիան որոշել է հատկացնել 586 մլն, Ֆրանսիան՝ 420 մլն, Քուվեյթը՝ 180 մլն դոլար:**

**BBC-ի տվյալներով, լիբիացի ապստամբները կուզենային առաջիկա 4 ամսում դաշնակիցներից ստանալ առնվազն 3 մլրդ դոլար:**

**Աբու Դաբիում համաձայնություն է ձեռք բերվել ստեղծելու ֆինանսավորման նոր մեխանիզմ եւ միջոցներ հատկացնելու Քադդաֆիի հակառակորդներին: Հանդիպման գլխավոր խնդիրն էր մշակել Լիբիայի ապագա կառուցվածքի ծրագրեր: Իր ելույթում ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը վստահություն հայտնեց, որ «Քադդաֆիի օրերը հաշված են»:**

**Հանդիպման ընթացքում հայտարարվեց, որ լիբիացի ապստամբների ֆինանսավորման ժամանակավոր մեխանիզմն արդեն գործում է: Փողերը եւ օգնությունը հատկացվում են տարբեր երկրներում սառեցված Լիբիայի իշխանությունների ակտիվների հաշվին:**

**«Շփման խմբի» երկրներից միայն ԱՄՆ իշխանությունները մինչեւ օրս չեն ապասառեցրել Քադդաֆիի կառավարության ակտիվները: Լիբիայի ժամանակավոր անցումային խորհրդի ներկայացուցիչները պնդում են, թե ընդդիմությանը շտապ փող է հարկավոր աշխատավարձեր վճարելու եւ պարեն ձեռք բերելու համար:**

# Ամփոփվեցին «Ոսկե ծիրան» կինոփառատոնի մրցութային ծրագրերը



Ինչպես «**Ազգը**» տեղեկացրել է, հուլիսի 10-17-ը անց է կացվում «Ոսկե ծիրան» 8-րդ երեւանյան միջազգային կինոփառատոնը: Փառատոնի ծրագրերի տնօրեն **Միքայել Ստամբոլցյանը** երեկ տեղեկացրեց, որ առ այսօր ստացվել է 631 հայտ 81 երկրներից բոլոր չորս մրցութային ծրագրերի համար եւ դրանցից ընտրվել են 150-ը` 45 երկրից: Ավանդույթի համաձայն փառատոնը կմեկնարկի սբ. Զորավոր եկեղեցուց, իսկ հետո «Մոսկվա» կինոթատրոնի մուտքի մոտ կրկին կբացվեն կինոաշխարհում հայտնի անձանց աստղերը (որոնք ամիսներ առաջ գողացվել ու պղծվել էին): Փառատոնը կբացի աշխարհահռչակ ռեժիսոր Աբաս Քիառոսթամիի «Վավերացված պատճեն» ֆիլմով, որն անցած տարի Կաննի մրցույթում արժանացել է մի շարք մրցանակների (լավագույն դերասանուհու մրցանակին է արժանացել Ժուլիետ Բինոշը): Այդ ֆիլմը դեռ անցած տարի էին ուզում փառատոնի մասնակիցները բերել, սակայն ռեժիսորի ու դերասանուհու զբաղվածության պատճառով հետաձգվեց: Փառատոնի միջազգային կապերի պատասխանատու **Տաթեւիկ Մանուկյանը** տեղեկացրեց, որ փառատոնում առաջին անգամ ավելացել է «Կորիզ» անվանակարգը: Ընդգրկվել են ռեժիսորներ Էդմոնդ Քյոսայանի, Դմիտրի Կեսայանցի, Ռոման Բալայանի, Բելա Տարի, Վոյչեխ Մարչեւսկու, Բերտրան Տավերնյեի չորս ֆիլմերի հետահայաց ցուցադրությունները: Ի դեպ, այդ ֆիլմերից մեկը Կաննի կինոմրցույթում 2 տարի առաջ արժանացել է գլխ. մրցանակի: Իտալիայի միավորման 150-ամյակին նվիրված կցուցադրվի հայտնի կինոռեժիսորներ Ռոբերտո Ռոսելինիի «Կեցցե Իտալիան», Պաոլո եւ Վիտորիո Տավիանիների «Ալոզանֆան», «Սուրբ Միքելեն աքաղաղ ուներ», Լուիջի Մանյիի «Հրաձիգներն են գալիս» ու Ռոբերտո Ֆաենցայի «Փոխարքան» ֆիլմերը: «Հայացք դրսից» հատուկ ծրագրում ներառվել են վերջերս հայերի ու Հայաստանի մասին արտասահմանցի ռեժիսորների նկարահանած ֆիլմերը: «Կինոդպրոցներ» ծրագրում կներկայացվեն Անջեյ Վայդայի (Լեհաստան) դպրոցի, Սապիր քոլեջի (Իսրայել), Ռուսաստանի կինոյի պետական ինստիտուտի (ВГИК) ուսանողական ֆիլմերը:

Արտամրցութային ծրագիրն այս տարի նվիրված է ԱՊՀ-ի ստեղծման 20-ամյակին, որ կրում է «ԱՊՀ երկրների կինոն» խորագիրը: Կցուցադրվեն ֆիլմեր Տաջիկստանից, Ուկրաինայից, Ռուսաստանից եւ այլն: Այս ծրագիրը կբացվի Ալեքսեյ Ուչիտելի «Եզերք» ֆիլմով, որը արժանացել է Օսկարի:

«ԱՊՀ երկրների կինոն» խորագրով բոլոր ֆիլմերը կցուցադրվեն «Մոսկվայի տանը», իսկ բացման ֆիլմը` «Մոսկվա» կինոթատրոնում: Միաժամանակ կընթանան կլոր սեղան-քննարկումներ:

Փառատոնի փոխտնօրեն **Արա Խանջյանը** տեղեկացրեց, որ վավերագրական ֆիլմերի մրցույթում ընդգրկված են ներկայացված ֆիլմերի 80 տոկոսը, եւ շատերը միջազգային մրցույթներում չեն ցուցադրվել: Իտալական «Տղամարդկանց դպրոց» վավ. ֆիլմի պրեմիերան կկայանա այս փառատոնի ընթացքում: Ուշագրավ է, որ ֆրանսիացի ռեժիսոր Էմանուել Դըմորը ներկայացրել է «Խոսքի արվեստը», ԱՄՆ-ից Նատալյա Ալմադաին «Գեներալը», Բրազիլիայից Լուսի Ուոքեր, Քարեն Հարլի «Աղբանոց» եւ այլոց վավերագրական ֆիլմերը: Փառատոնի ֆիլմերի մեծ մասը թարգմանված են: Լրագրողների համար հունիսի 20-ից կսկսվեն փառատոնային ֆիլմերի նախնական ցուցադրությունները: «Հայկական ֆիլմ» ծրագրում ընդգրկված է Արմեն Խաչատրյանի «Երկաթյա դարպասներ» ֆիլմը:

«Հայկական համայնապատկեր» մրցույթում ընդգրկված են հայազգի ռեժիսորների ֆիլմերը` Ֆրանսիայից, Դանիայից, Շվեդիայից, Գերմանիայից: Հայաստանից ներկայացված են Հարություն Շաֆիյանի, Գագիկ Ստեփանյանի, Աննա Թովմասյանի, Արշակ Իգիթյանի, Վահան Ստեփանյանի, Աշոտ Ադամյանի, Դավիթ Մաթեւոսյանի եւ այլոց աշխատանքները:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Հաղթաբերի ճամփան» վավերագրական ֆիլմը ցուցադրվեց «Նարեկացի» արվեստի միությունում

Երեկ «Նարեկացի» արվեստի միությունում ցուցադրվեց «Հաղթաբերի ճամփան» 25-րոպեանոց վավերագրական ֆիլմը: Սցենարի հեղինակներ Սամվել Թադեւոսյանն ու Ամիրան Գալստյանը ռեժիսոր Ռուբեն Հովհաննիսյանի հետ ստեղծել են մի այնպիսի ֆիլմ-հիշողություն, որը նվիրված է 2000-2007 թթ. Հայաստանի Հանրապետության ամենաերկարակյաց վարչապետ, հասարակական-քաղաքական գործիչ Անդրանիկ Մարգարյանի ծննդյան 60-րդ տարեդարձին եւ ներկայացնում է նրա դերը հայոց պետականության կայացման գործում: Ֆիլմի դիտումը կազմակերպվել է «Անդրանիկ Մարգարյան» ընկերախմբի նախաձեռնությամբ: Ներկա էին բարձրաստիճան պետական պաշտոնյաներ ու հյուրեր:

Ս. Ս.

# Կայացավ նկարիչ Վիկտոր Հովհաննիսյանի ստեղծագործական աշխատանքների ցուցահանդեսը

Երեկ Ավ. Իսահակյանի անվան գրադարանում մարդաշատ ու հաճելի մթնոլորտ էր: Առիթը նկարիչ Վիկտոր Հովհաննիսյանի ստեղծագործական աշխատանքների ցուցահանդեսի բացումն ու բանաստեղծ, դրամատուրգ Գուրգեն Միքայելյանի հետ հանդիպումն էր: Երկու փոքրիկ ու համեստ արտաքինի տակ թաքնված անձինք, որոնց իրական մեծությունը տեսանելի է իրենց թողած արվեստի ու գրականության ժառանգության մեջ` գրավիչ ու խորը:

Արմատներով կարնեցի **Վիկտոր Հովհաննիսյանը** Երեւան է եկել Ջավախքից. «1966-ին տեսա Երեւանը եւ ամուր կապվեցի Հայաստանին ու Արարատին»: Խ. Աբովյանի անվան պետական ինստիտուտի գեղագիտության ֆակուլտետն ավարտելուց հետո տասնամյակներ շարունակ նա աշխատել է Հանրային հեռուստաընկերությունում` որպես նկարիչ-ձեւավորող: Ինչպես ինքն է խոստովանում, իր գործերը ստեղծելիս ներշնչվել է համաշխարհային եւ հայ մեծանուն նկարիչներով. «Իմ կտավների մեջ առաջին շերտը Սարյանն է, երկրորդը` ես»:

Միջոցառման հաղորդավարի բնորոշմամբ` խոսքի, երաժշտության եւ գույների մարդ է Վիկտոր Հովհաննիսյանը, ով ստեղծագործում է երաժշտության ներքո. «Իմ նկարներում երաժշտություն կա, որն արհեստական չէ: Երաժշտությունը, որի ուղեկցությամբ ստեղծագործում եմ, եթե որակյալ է, ինձ պահում է որակյալ մակարդակի վրա, թույլ չի տալիս կեղծ գույներ գործածել, եւ արդյունքում աշխատանքը կատարյալ է ստացվում»: Արվեստագետի գործերի մեծամասնության մեջ ներկա են կապույտ եւ կանաչ գույները, որոնք, ինչպես պարզաբանեց նկարիչը, իր համար խորհրդանշում են թարմություն, թեթեւություն եւ օդ, առանց որոնց շնչել հնարավոր չէ: Հովհաննիսյանը կտավներից ու գրաֆիկական աշխատանքներից զատ նկարել-ձեւավորել է նաեւ հայ եւ համաշխարհային հեղինակների գրքեր, որոնք տպագրվել են կամ սպասում են լույս ընծայմանը:

Երեկույթը «համեմված էր» Գուրգեն Միքայելյանի բանաստեղծությունների ասմունքով, Աբովյան քաղաքի էստրադային, ջազային արվեստի ստուդիայի սաների փոքրիկ երգացանկով: Բարեմաղթանքներով ու կարծիքներով հանդիսատեսի հետ կիսվեցին վաստակաշատ մտավորականներ` հեռուստալրագրող Վրեժ Սարուխանյանը, բանաստեղծ, թարգմանիչ Հովհաննես Սարոյանը, դերասան, դրամատուրգ Դերենիկ Մարտիրոսյանը, նկարիչ Ստեփան Անդրանիկյանը, հրավիրված այլ հյուրեր:

ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ


**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**«Գրանդ Թրեյդ» ՍՊԸ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| ԱԿՏԻՎՆԵՐ | 31.12.2010 հազար դրամ | 31.12.2009 հազար դրամ |
|---|---|---|
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | |
| Հիմնական միջոցներ | 190 | 93 |
| Ոչ նյութական ակտիվներ | 171 | 17 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 28,769 | 20 |
| | 29,130 | 130 |
| **Ընթացիկ ակտիվներ** | | |
| Պաշարներ | 152,911 | 3,227 |
| Առեւտրային և այլ դեբիտորական պարտքեր | 27,278 | 450 |
| Դրամական միջոցներ | 141,196 | 12,103 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 45,480 | 2,804 |
| | 366,865 | 18,584 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | **395,995** | **18,714** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| Սեփական կապիտալ | | |
| Կանոնադրական կապիտալ | 50 | 50 |
| Կուտակված շահույթ/(վնաս) | 83,164 | (2,354) |
| | 83,214 | (2,304) |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | |
| Փոխառություններ | - | 1,200 |
| | - | 1,200 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | |
| Առեւտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 312,781 | 19,818 |
| | 312,781 | 19,818 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **395,995** | **18,714** |

Արսեն Ասատրյան
Տնօրեն
Կարեն Գյոզալյան
Գլխավոր հաշվապահ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Գրանդ Թրեյդ» ՍՊԸ**
**2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա համար**

| | 2010 հազար դրամ | 2009 հազար դրամ |
|---|---|---|
| Հասույթ | 5,803,505 | 55,570 |
| Վաճառքի ինքնարժեք | (5,119,184) | (54,405) |
| **Համախառն եկամուտ** | **684,321** | **1,165** |
| Իրացման ծախսեր | (541,039) | (1,452) |
| Վարչական ծախսեր | (36,245) | (2,046) |
| Գործառնական այլ եկամուտներ | 74 | - |
| Գործառնական այլ ծախսեր | (2) | - |
| **Շահույթ/(վնաս) մինչև հարկումը** | **107,109** | **(2,333)** |
| Շահութահարկի գծով ծախս | (21,591) | (21) |
| **Տարվա զուտ շահույթ/(վնաս)** | **85,518** | **(2,354)** |

Արսեն Ասատրյան
Տնօրեն
Կարեն Գյոզալյան
Գլխավոր հաշվապահ

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Գրանդ Թրեյդ» ՍՊԸ**
**2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա համար**

| | Կանոնադրական կապիտալ | Կուտակված շահույթ (վնաս) | Ընդամենը |
|---|---|---|---|
| | *հազար դրամ* | *հազար դրամ* | *հազար դրամ* |
| **Մնացորդն առ 1 հունվարի 2009թ.** | - | - | - |
| Կանոնադրական կապիտալի համալրում | 50 | - | 50 |
| Տարվա զուտ շահույթ/(վնաս) | - | (2,354) | (2,354) |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2009թ.** | **50** | **(2,354)** | **(2,304)** |
| Տարվա զուտ շահույթ | - | 85,518 | 85,518 |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2010թ.** | **50** | **83,164** | **83,214** |

Արսեն Ասատրյան
Տնօրեն
Կարեն Գյոզալյան
Գլխավոր հաշվապահ

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Գրանդ Թրեյդ» ՍՊԸ**
**2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա համար**

| | 2010 հազար դրամ | 2009 հազար դրամ |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր** | | |
| Հաճախորդներից մուտքեր | 6,918,248 | 66,687 |
| Այլ գործառնական մուտքեր | 72 | 1 |
| Վճարումներ ապրանքների դիմաց | (6,367,930) | (54,520) |
| Վճարումներ ծառայությունների դիմաց | (149,910) | - |
| Վճարումներ աշխատավարձի գծով | (119,233) | (878) |
| Վճարումներ շահութահարկի գծով | (50,340) | - |
| Վճարումներ այլ հարկերի գծով | (64,683) | (111) |
| Վճարումներ սոցիալական ապահովության գծով | (35,083) | (194) |
| Գործառնական այլ ելքեր | (457) | - |
| ***Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***130,684*** | ***10,985*** |
| Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր | | |
| Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով | (391) | (132) |
| ***Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***(391)*** | ***(132)*** |
| Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր | | |
| Կանոնադրական կապիտալի համալրումից | - | 50 |
| Փոխառությունների ստացումից մուտքեր | - | 1,200 |
| Փոխառությունների մարումից ելքեր | (1,200) | - |
| ***Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***(1,200)*** | ***1,250*** |
| ***Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***129,093*** | ***12,103*** |
| Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ | 12,103 | - |
| Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ | 141,196 | 12,103 |

Արսեն Ասատրյան
Տնօրեն
Կարեն Գյոզալյան
Գլխավոր հաշվապահ

**«ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ**
**Անկախ աուդիտորական եզրակացություն N 16**
**«Գրանդ Թրեյդ» ՍՊԸ 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ**

*Ներկայացվում է «Գրանդ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավարությանը*

Մեր կողմից իրականացվել է «Գրանդ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ` Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը եւ այլ ծանոթագրությունները:

**Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ` զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

Մենք պատասխանատու ենք ՀՀ Կառավարության 21.04.2005 թ. թիվ 509-Ն որոշմամբ հաստատված աուդիտ ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այս ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել եւ անցկացնել` ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր` ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման եւ ոչ` ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Գրանդ Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաեւ նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները եւ դրամական հոսքերը` համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

*22 ապրիլի 2011 թ.*
*«ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ*
*Մանվել Ղազարյան* — *Տնօրեն*
*Գնել Խաչատրյան* — *Աուդիտոր*

# Ջերմուկը կրկին կհյուրընկալի Կարեն Ասրյանի հուշամրցաշարի մասնակիցներին

Հունիսի 16-ին Ջերմուկում կմեկնարկի Կարեն Ասրյանի արդեն ավանդական դարձած շախմատի միջազգային 4-րդ հուշամրցաշարը: Այդ առիթով երեկ շախմատի տանը կազմակերպված մամուլի ասուլիսում մրցաշարի կազմակերպման եւ անցկացման մասին մանրամասն տեղեկատվություն տվեցին շախմատի Հայաստանի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Գագիկ Հովհաննիսյանը, մրցաշարի տնօրեն, շախմատի ֆեդերացիայի գործադիր տնօրեն Հրաչիկ Թավադյանը, գլխավոր մրցավար Արմեն Նիկողոսյանն ու Վրեժ Օրդյանը:

Մրցաշարի մասնակցության հայտ են ներկայացրել 68 շախմատիստներ, որոնցից 19 գրոսմայստերներ են, 11-ը՝ միջազգային վարպետներ: Տարեցտարի ընդլայնվում է մասնակիցների կազմն ու աշխարհագրությունը: Բացի Հայաստանից, մրցաշարին կմասնակցեն նաեւ Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի, ԱՄՆ-ի եւ Ղազախստանի շախմատիստները: Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 տուրով: Մրցաշարի բացումը տեղի կունենա հունիսի 15-ին, ժամը 18-ին Ջերմուկի Կարեն Ասրյանի անվան շախմատի դպրոցում, որտեղ էլ անցկացվելու են մրցումները: Բացմանը ներկա կլինեն մեր վաղամեռիկ գրոսմայստերի, շախմատի օլիմպիադայի չեմպիոն Կարեն Ասրյանի ծնողները: Առաջին տուրի հանդիպումները կսկսվեն հունիսի 16-ին, ժամը 15-ին: Մրցաշարը կավարտվի հունիսի 24-ին: Ավարտական տուրը կսկսվի ժամը 11-ին, իսկ փակման արարողությունը տեղի կունենա հունիսի 24-ին, ժամը 20-ին:

Առաջին անգամ այս հուշամրցաշարում մասնակիցները հնարավորություն կունենան լրացնելու միջազգային գրոսմայստերի եւ միջազգային վարպետի նորմաները: Մրցանակային ընդհանուր հիմնադրամը 15 հազար դոլար է, որը կբաշխվի լավագույն արդյունքի հասած 15 շախմատիստների միջեւ: Հատուկ դրամական պարգեւներ են նախատեսված նաեւ շախմատիստուհիների, մինչեւ 16 տարեկան պատանիների եւ 60-ից բարձր տարիք ունեցող մասնակիցների մեջ լավագույն արդյունքի հասած շախմատիստների համար: Մրցաշարի




հաղթողը կպարգեւատրվի 3000 դոլարով:

Մրցաշարի կազմկոմիտեն բավականին մեծ ծավալի աշխատանք է կատարել Կարեն Ասրյանի 4-րդ հուշամրցաշարը պատշաճ մակարդակով անցկացնելու համար: Այդ գործում իրենց մեծ ներդրումն ունեն նաեւ հովանավորները: Մրցաշարի գլխավոր հովանավորն է «Արտակ Սարգսյան» բարեգործական հիմնադրամը, հովանավորներն են «Ջերմուկ առողջարան» ՓԲԸ-ն (խորհրդի նախագահ՝ Ստեփան Ավագյան) եւ «Գեոթիմ» ՓԲԸ-ն (տնօրեն՝ Հայկ Ալոյան):

Մրցաշարի մասնակիցների ցանկը գլխավորում է ամենաբարձր անհատական վարկանիշն ունեցող Արման Փաշիկյանը (2643): Եվս երկու մասնակիցներ 2600-ից բարձր վարկանիշ ունեն: Նրանք են ռուսաստանցի գրոսմայստերներ Մաքսիմ Տուրովը (2634) եւ Եվգենի Գլեյզերովը (2600): 2500-ից բարձր վարկանիշ ունեցող շախմատիստների թվում են Սամվել Տեր-Սահակյանը (2592), Արտաշես Մինասյանը (2558), Հայաստանի այս տարվա չեմպիոն Ռոբերտ Հովհաննիսյանը (2553), Կոնստանտին Շանավան (2539), Էլշան Մորադիաբադին (2536), Միխայիլ Ուլիբինը (2532), Տիգրան Քոթանջյանը (2517), Դանիլ Դուբովը (2505) եւ Արթուր Չիբուխչյանը (2500): Նշենք, որ ռուսաստանցի 15-ամյա շախմատիստ Դանիլ Դուբովը օրերս է գրոսմայստերի կոչման արժանացել:

68 մասնակիցների թվում են 13 շախմատիստուհիներ: Մրցաշարին կմասնակցի օրերս կանանց գրոսմայստերի կոչում ստացած, ԱՄՆ-ում բնակվող Տաթեւ Աբրահամյանը: Կանանց գրոսմայստերի տիտղոս են կրում նաեւ վրաց շախմատիստուհի, օլիմպիական չեմպիոն Նինո Բացիաշվիլին եւ ռուսաստանցի Մարիա Կուրսովան: Մրցաշարի ամենատարեց մասնակիցը հայկական շախմատի անվանի վետերաններից մեկն է՝ միջազգային վարպետ Էդուարդ Մնացականյանը:

Կարեն Ասրյանի անդրանիկ հուշամրցաշարը կայացել է Երեւանում, 2008-ին: Այդ ժամանակ Երեւանում անցկացվում էր արագ շախմատի «Հսկաների մրցաշար», որի մեկնարկի օրը տեղի ունեցավ դժբախտությունը՝ կյանքից անժամանակ հեռացավ հանկարծամահ եղած Կարեն Ասրյանը: Եվ շախմատի ֆեդերացիայի նախագահի, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի առաջարկով «Հսկաների մրցաշարը» որոշվեց նվիրել Կարեն Ասրյանի հիշատակին ու հետագա տարիներին անցկացնել նրա հուշամրցաշարը: Այդ տարի արագ շախմատի մրցաշարում հաղթող ճանաչվեց Լեւոն Արոնյանը:

2009-ից Կարեն Ասրյանի հուշամրցաշարերն անցկացվում են Ջերմուկում: 2009-ին հաղթող էին ճանաչվել Լեւոն Բաբուջյանն ու Սամվել Տեր-Սահակյանը, իսկ անցյալ տարի գլխավոր մրցանակին արժանացել է Տիգրան Քոթանջյանը:

# Թուրքերը դեմ են Հիդինգի «Չելսի» տեղափոխմանը

Թուրքիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Մահմութ Օզգեները «Չելսիի» ղեկավարությանը սպառնացել է դիմել ՖԻՖԱ-ին, եթե վերջինս փորձի գաղտնի բանակցություններ վարել Գուս Հիդինգի հետ, որը ներկայումս մարզում է Թուրքիայի ազգային հավաքականը: Թեեւ Հիդինգը դեռեւս մեկ տարվա գործող պայմանագիր ունի Թուրքիայի ֆեդերացիայի հետ, սակայն «Չելսիի» սեփականատեր Ռոման Աբրամովիչը մտադիր է մարզչին կրկին վստահել թիմի ղեկը: Ինչպես հայտնի է, մրցաշրջանի ավարտից հետո «Չելսին» հրաժարվեց Կառլո Անչելոտիի ծառայություններից եւ այժմ նոր գլխավոր մարզիչ է որոնում:

Գուս Հիդինգը 2009-ին մրցաշրջանի 2-րդ կեսում գլխավորել էր «Չելսին»՝ փոխարինելով պորտուգալացի Լուիս Ֆելիպե Սկոլարիին: Նրա գլխավորությամբ «Չելսին» նվաճել էր Անգլիայի գավաթը, կարողացել էր կարճ ժամանակահատվածում մարտական կոլեկտիվ ստեղծել: Եվ ահա այժմ Ռոման Աբրամովիչը ցանկանում է Հիդինգին վերադարձնել «Չելսի»:

Հիդինգի պայմանագրում մի կետ կա, որի համաձայն 3,5 մլն ֆունտ ստեռլինգի դիմաց հնարավոր է պայմանագիրը ժամկետից շուտ խզել: Թուրքիայի ֆուտբոլի ֆեդերացիան 4 մլն ֆունտ ստեռլինգ էր պահանջել, սակայն «Չելսին» այդ գումարին համաձայն չէ: Բացի այդ էլ, այժմ Թուրքիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահն է կտրականապես դեմ պայմանագրի վաղաժամկետ խզմանը:

Ճիշտ է, Հիդինգի գործակալը գտնում է, որ հոլանդացի մարզիչը ոչ մի տեղ էլ չի գնա ու սեպտեմբերին նրա գլխավորությամբ Թուրքիայի հավաքականը կշարունակի պայքարը Եվրո-2012-ի ուղեգրերի համար: Իսկ առայժմ Հիդինգը պատրաստվում է արձակուրդի մեկնել:



Հետաքրքրական է, որ Հիդինգի ճակատագրով արդեն սկսել են հետաքրքրվել բուքմեյքերական ընկերությունները: «Չելսին» գլխավորելու Հիդինգի հնարավորությունները Sky Bet բուքմեյքերական ընկերությունը գնահատել է 9:4 հարաբերությամբ: Իսկ ահա Թուրքիայի հավաքականում աշխատանքը շարունակելու դեպքի համար խաղադրույքներ են ընդունվում 1:8 հարաբերությամբ:

Ըստ բրիտանական լրատվամիջոցների, եթե «Չելսիին» չհաջողվի համոզել թուրքերին, ապա թիմի գլխավոր մարզչի հաջորդ թեկնածուն կլինի Մարկ Հյուզը, որը վերջերս է հեռացել «Ֆուլհեմից»:

ԹԵՆԻՍ

# Նալբանդյանը դուրս մնաց պայքարից

Լոնդոնում ընթացող թենիսի մրցաշարում Դավիթ Նալբանդյանին չհաջողվեց հաղթահարել 3-րդ փուլի արգելքը: Արգենտինահայ թենիսիստը պարտվեց իսպանացի Ֆեռնանդո Վերդասկոյին (5-7, 1-6):

Հաջող մրցելույթներն է շարունակում իսպանացի Ռաֆայել Նադալը, որը նախորդ շաբաթ 6-րդ անգամ նվաճել էր «Ռոլան Գարոսի» մրցաշարի չեմպիոնի տիտղոսը: Նադալը հաղթեց չեխ Ռադեկ Շտեպանեկին (6-3, 5-7, 6-1): Հաջորդ փուլի ուղեգիր են նվաճել նաեւ Ժո Ուիլֆրիդ Տսոնգան, Ադրիան Մանարինոն, Էնդի Ռոդիկը, Մարին Չիլիչը եւ Էնդի Մարեյը:

# Սուպերգրոսմայստերների մասնակցությամբ

Լեւոն Արոնյանը կմասնակցի սեպտեմբերի 1-5-ը Մոսկվայում կայանալիք աշխարհի 6-րդ չեմպիոն Միխայիլ Բոտվիննիկի հուշամրցաշարին: Նրա մրցակիցները կլինեն աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդը, Մագնուս Կառլսենն ու Վլադիմիր Կրամնիկը: Մասնակիցները արագ շախմատի 2 շրջանից բաղկացած մրցաշար կանցկացնեն:

# «Շիրակը» կորուստներ է կրում

Ինչպես տեղեկացանք Գյումրիի «Շիրակի» պաշտոնական կայքից, թիմի 24-ամյա կիսապաշտպան Արտակ Օսեյանը առողջական խնդիրների պատճառով ստիպված է ավարտել ֆուտբոլիստի կարիերան: Օսեյանը մտադիր է զբաղվել մարզչական գործունեությամբ եւ արդեն Բ կարգի արտոնագիր ստանալու հայտ է ներկայացրել ֆուտբոլի ֆեդերացիա ու կմասնակցի մարզչական դասընթացներին:

Իր համեմատաբար ոչ այնքան երկար ֆուտբոլային կարիերայի ընթացքում Արտակ Օսեյանը հանդես է եկել «Բանանցում» ու «Գանձասարում»: Նա ընթացիկ առաջնությունում էր տեղափոխվել «Շիրակ»՝ մշտապես ընդգրկվելով թիմի մեկնարկային կազմում:

Մի քանի օր առաջ էլ կրկին առողջական խնդիրների պատճառով «Շիրակին» հրաժեշտ տվեց բրազիլացի պաշտպան Տիագո Լոպեսը: Նա որոնվայնի մասում ստացած բավականին լուրջ վնասվածքից հետո պետք է բուժման երկար կուրս անցնի: Ուստի երկկողմ համաձայնությամբ Լոպեսի հետ պայմանագիրը խզվել է:

Ավելի վաղ «Շիրակը» հրաժարվել էր Բենջամին Կաբոնգոյից եւ վրացի դարպասապահ Գելա Զամունաշվիլուց: Վերջինս նախորդ մրցաշրջանի վերջերին էր ընդգրկվել «Շիրակում»՝ թիմի պատմության մեջ դառնալով առաջին լեգեոնականը:

# Ֆուտբոլային ակադեմիան՝ գաղտնի կառո՞ւյց

ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի ֆուտբոլային ակադեմիայի (Աճառյան փ. 35/31) դռները փակ են ֆուտբոլ պարապող երեխաների ծնողների համար: Երբ ծնողները երեխաներին՝ հասկապես կրտսեր տարիքի, բերում են պարապմունքի, ապա մինչեւ մարզումների ավարտը պետք է նրանց սպասեն մոտ մեկ ժամ ակադեմիայի պատերին հենվելով, շենքի աստիճաններին նստելով, կամ հարեւանությամբ գտնվող «Play city» զվարճանքի կենտրոնում: Երբ հարցնում ես, ի՞նչն է պատճառը, որ ծնողներին արգելում են ներսում՝ հարմարավետ սպասասրահում սպասել երեխաներին, ակադեմիայի աշխատակիցները միայն թոթվում են ուսերը: Իսկ մարզիչներից մեկն անկեղծանալով ասաց, որ ծնողների մուտքն ակադեմիայի շենք արգելելը ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարության հերթական քմահաճույքն է:

Հետաքրքրական է, թե ինչ ավերածություններ կարող են անել ֆուտբոլային ակադեմիայում այդ «գազան» ծնողները, որ այնտեղ նրանցից այդքան վախենում են ու ներս չեն թողնում: Ակադեմիան գաղտնի «ռազմական» օբյե՞կտ է, որ աշխատում են ավելորդ այցելուներից զերծ պահել: Պետք է նշել, որ այլ երկրներում ոչ միայն չեն արգելում ծնողների մուտքը ֆուտբոլային բազա, այլեւ նրանց թույլատրում են հետեւել իրենց երեխաների պարապմունքներին: Դե մենք ուրիշ ենք, պիտի անպայման տարբերվենք:

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ծնող

# Շաքիլ Օ'Նիլը հրաժեշտ է տալիս սպորտին

ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցության քառակի չեմպիոն, օլիմպիական խաղերի եւ աշխարհի չեմպիոն, համաշխարհային բասկետբոլի ամենավառ «աստղերից» մեկը՝ Շաքիլ Օ'Նիլը հայտարարել է սպորտին հրաժեշտ տալու մասին: 39-ամյա բասկետբոլիստը 19 մրցաշրջան է անցկացրել, հանդես է եկել դեռեւս այն ժամանակ, երբ խաղահրապարակներում իրենց վարպետությամբ փայլում էին Մայքլ Ջորդանը, Չարլզ Բարկլին, Պատրիկ Յուինգը, Հակիմ Օլաջյուվոնը եւ այլ «աստղեր»: Շաքիլ Օ'Նիլն այդ սերնդի «աստղերի» վերջին մոհիկանն էր, որ դեռեւս շարունակում էր ելույթները:




Մարզական իր երկարատեւ կարիերայի ընթացքում Շաքիլը հանդես է եկել «Օռլանդոյում» (1992-1996-ին), «Լեյկերսում» (1996-2004-ին), «Մայամիում» (2004-2008-ին), «Ֆինիքսում» (2008-2009-ին), «Կլիվլենդում» (2009-2010-ին) եւ «Բոստոնում» (2010-2011-ին): 1996-ին ԱՄՆ-ի հավաքականի կազմում դարձել է օլիմպիական չեմպիոն, 1994-ին նվաճել է աշխարհի չեմպիոնի տիտղոսը՝ արժանանալով առաջնության լավագույն բասկետբոլիստի կոչմանը: Նա 15 անգամ մասնակցել է «Բոլոր աստղերի» հանդիպումներին: 1996-ին «Օռլանդոյից» տեղափոխվելով «Լեյկերս», Շաքիլ Օ'Նիլը զգալիորեն ուժեղացրեց թիմի կազմը, որը Ֆիլ Ջեքսոնի գլխավորությամբ անպարտելի էր: Սակայն թիմի երիտասարդ «աստղ» Կոբի Բրայանտի հետ նրա հարաբերությունների սրման հետեւանքով ստիպված էր տեղափոխվել «Մայամի», որտեղ 2006-ին Շաքիլ Օ'Նիլը նվաճեց չեմպիոնի տիտղոսը:

Այս տարի նա հույս ուներ «Բոստոնում» նվաճել իր 5-րդ չեմպիոնական տիտղոսը, սակայն վնասվածքների պատճառով բավական հանդիպումներ ստիպված էր բաց թողնել: Եվ անվանի բասկետբոլիստը զգաց, որ եկել է սիրած մարզաձեւին հրաժեշտ տալու ժամանակը:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԵՎՐՈՄԻՈՒԹՅՈՒՆ

# Հետաձգվեց Ռումինիայի եւ Բուլղարիայի մուտքը Շենգենյան գոտի

ԵՄ անդամ երկրների ներքգործնախարարները որոշել են հետաձգել Ռումինիայի եւ Բուլղարիայի ընդունումը Շենգենյան գոտի: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Հետաձգման որոշումն ընդունվել է Եվրոխորհրդարանից ԵՄ նախարարների խորհրդի ստացած դիմումի կապակցությամբ, որտեղ պատգամավորները հորդորում էին սկսել Շենգենյան գոտում երկու երկրների ընդգրկման գործընթաց: Novinite.com կայքի տվյալներով, եվրոպատգամավորները դիմումի մեջ հավաստել էին, թե Ռումինիայի եւ Բուլղարիայի իշխանությունները կատարել են օրենսդրության ասպարեզում ավելի վաղ իրենց ներկայացված պահանջները:

Դեռ չորեքշաբթի օրը նույն կայքը, DPA գործակալությանը վկայակոչելով, հաղորդել էր, որ եվրոպացի նախարարները բավարարված չեն եվրոպատգամավորների կարծիքով: Ընդունելով, որ Ռումինիան եւ Բուլղարիան իրոք բարելավել են սահմանային վերահսկողությունը, ԵՄ անդամ մի շարք երկրներ այնուամենայնիվ որոշել են սպասել հանցավորության դեմ երկու պետությունների պայքարի արդյունքներին նվիրված ամենամյա զեկուցագրի հրապարակմանը:

Փաստաթուղթը պետք է հրապարակվի 2011-ի հուլիսին: ԵՄ երկրների նախարարները հույս ունեն այն ուսումնասիրել մինչեւ սեպտեմբեր: Ըստ որում, նախարարները նույնիսկ մոտավոր ձեւով չեն նշում, թե Ռումինիան եւ Բուլղարիան երբ կարող են ընդունվել անդամ Շենգենյան գոտի:

Բալկանյան երկու երկրների ընդունման ժամկետները սկսեցին հետաձգվել անցյալ տարվանից: Ըստ ոչ պաշտոնական ծրագրերի, նախապես որոշված էր նրանց հայտը քննել 2011-ի մարտին, սակայն Ռումինիայի եւ Բուլղարիայի ներքին դրության պատճառով քննարկումը հետաձգվեց: Այն ժամանակ էլ ենթադրություն արվեց, որ երկու երկրները կարող են Շենգենյան գոտու մեջ մտնել 2013-ից ոչ շուտ:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Ազգ» օրաթերթի 2011թ. հունիսի 4-ի թիվ 102(4721) «Մասնավորեցում» թողարկման մեջ հրապարակված օտարման ենթակա ՀՀ գլխավոր դատախազության հաշվեկշռում գտնվող գույքի աճուրդի հրապարակային ծանուցման մեջ 14.11.2011թ. կարդալ 14.10.2011թ.

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն***


## Վաճառվում է

**Daewoo Matiz Best**
մակնիշի ավտոմեքենա
2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 3 600 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր., գերազանց վիճակ է:
**Հեռ.՝ (094) 577-578**

## Վաճառվում է

LADA Priora մակնիշի ավտոմեքենա, 2008 թվականի արտադրության, 2010 թվականի վաճառք: Գտնվում է գործարանային երաշխիքի մեջ: Վազքը՝ 13 000 կմ, գույնը՝ սեւ մետալիկ, հեչբեք: Ունի՝ կոնդիցիոներ, անվտանգության բարձիկ, քորտ համակարգիչ, հայելիների եւ ապակիների (մգեցված) էլեկտրոնային կարգավորում, բարձրակարգ աուդիո համակարգ՝ Bluetooth-ով եւ iPhone/iPod միացումով: Տրվում են նաեւ 4 ձմեռային անվադողեր՝ համարյա նոր վիճակում:
**Հեռ.՝ (094) 401-337**

Եվրոպահայեր evropahayer.eu

**Նոր՝ հնգալեզու հայկական սոցիալական ցանց՝**

**www.evropahayer.eu**

▼ *Մնա կապի մեջ ընկերներիդ հետ*
▼ *Գտիր կյանքի ընկեր Եվրոպայում*
▼ *Գտիր գործընկեր Եվրոպայում*
▼ *Եւ շատ ու շատ ավելին*

Միացե՛ք մեզ, եւ Ձեզ սպասվում են հետաքրքիր ժամանց եւ հետաքրքիր կոնտակտներ!





*Ձեւ N1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 01. 01. 2011 թ.**

ծածկագիրը

| | | |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | Եր-ի Գեղ. ժամ-ի գործ-ն ԲԲԸ | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | ծառայություն | |
| Պետռեգիստրում գրանցման համարը | | 27812000979 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 00401886 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ՀՀ, ք. Երեւան Լ. Լիսինյան-33 | հեռ. 559065 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | Լ. Լիսինյան-33 | հեռ. 559065 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 395948 | 392792 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 060 | 1887 | 46 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 397835 | 392838 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 247411 | 247399 |
| Արագամաշ առարկաներ | 110 | 3319 | 3319 |
| Արտադրանք | 130 | 23463 | 23463 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 12 | 12 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 39987 | 39888 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 976 | 760 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | 1108 | 2015 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 1022 | 775 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 317298 | 317631 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 715133 | 710469 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 303030 | 303030 |
| Վերագնահատումից եւ վերաչափումից տարբերություններ | 260 | 241945 | 241945 |
| Կուտակված շահույթ | 270 | (149695) | (146776) |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 395280 | 398199 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | 8796 | 16813 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 8796 | 16813 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 71077 | 71133 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 230684 | 223603 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 8617 | 80 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 19 | - |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 285 | 266 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | 375 | 375 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 311057 | 295457 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 715133 | 710469 |

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ** *Ձեւ N2*
**2010 թ.**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 92900 | 22 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (67031) | - |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 25869 | 22 |
| Իրացման ծախսեր | 040 | (189) | - |
| Վարչական ծախսեր | 050 | (9467) | (9957) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 16213 | (9935) |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում | 070 | 49038 | 8582 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում | 080 | (22638) | (528) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 42613 | (1881) |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝ | 130 | (24037) | 4881 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 18576 | 3000 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 18576 | 3000 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (8612) | (80) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 9964 | 2920 |

*Ղեկավար* *Հ. Մելքոնյան*
*Գլխավոր հաշվապահ* *Ռ. Կարապետյան*

## Հայտարարություն

«Երեւանի Գեղարվեստական ժամացույցների գործարան» ԲԲԸ խորհուրդը տեղեկացնում է, որ ս/թ հունիսի 25-ին ժամը 11-ին Լ. Լիսինյան 33 հասցեում տեղի կունենա ընկերության տարեկան ժողովը:

Օրակարգ՝

1. Հաշվիչ հանձնաժողովի ձեւավորումը
2. 2010 թ. տարեկան հաշվետվությունը եւ 2010 թ. ֆինանսական հաշվետվություն
3. Վերստուգիչ հանձնաժողովի եզրակացության հաստատում
4. 2011 թ. ընկերության արտադրատնտեսական գործունեության հաստատում
5. Ընկերության խորհրդի կազմի ընտրություն
6. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատում

Ժողովի ժամանակ քննարկվող հարցերի մասին տեղեկություններ կարող եք ստանալ ընկերության հաշվապահությունում՝ աշխատանքային օրերին ժամը 14-16-ը:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 25.05.2011 թ. դրությամբ:

Ժողովի մասնակիցների գրանցումը անցկացվելու է ս/թ հունիսի 25-ին, ժամը 10-11-ը:

Անձը հաստատող փաստաթղթերի առկայությունը պարտադիր է:

Ընկերության 2010 թ.-ի աուդիտն իրականացրել է «Երեւան-Աուդիտ Կոնսալտ» ՍՊԸ-ն:

***ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ***
***Ա. Մինասյան***

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**«Անուշ լինի» ՍՊԸ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| ԱԿՏԻՎՆԵՐ | 31.12.2010 հազար դրամ | 31.12.2009 հազար դրամ |
|---|---|---|
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | |
| Հիմնական միջոցներ | 9,664 | 12,418 |
| Ոչ նյութական ակտիվներ | 3,885 | 197 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | - | 1,972 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **13,549** | **14,587** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | |
| Պաշարներ | 295,154 | 261,110 |
| Առեւտրային և այլ դեբիտորական պարտքեր | 103,675 | 52,502 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 141,431 | 20,268 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 23,477 | 1,245 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **563,737** | **335,125** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | **577,286** | **349,712** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| **Սեփական կապիտալ** | | |
| Կանոնադրական կապիտալ | 50 | 50 |
| Կուտակված շահույթ | 174,256 | 46,649 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **174,306** | **46,699** |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | |
| Փոխառություններ | 252,261 | 292,261 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 252,261 | 292,261 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | |
| Առեւտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 145,351 | 10,752 |
| Պարտավորություններ շահութահարկի գծով | 5,368 | - |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **150,719** | **10,752** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **577,286** | **349,712** |

**Ալեքսանդր Մուրուզյան** / **Տնօրեն**
**Արտակ Բրուտյան** / **Գլխավոր հաշվապահ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Անուշ լինի» ՍՊԸ**
**2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա համար**

| | 2010 հազար դրամ | 2009 հազար դրամ |
|---|---|---|
| Հասույթ | 2,208,565 | 2,148,950 |
| Վաճառքի ինքնարժեք | (2,004,923) | (2,065,736) |
| **Համախառն եկամուտ** | **203,642** | **83,214** |
| Իրացման ծախսեր | (18,929) | (8,596) |
| Վարչական ծախսեր | (21,655) | (12,678) |
| Գործառնական այլ եկամուտներ | 11,637 | 23,104 |
| Գործառնական այլ ծախսեր | (5,573) | (24,342) |
| Գործառնական շահույթ/(վնաս) | 169,122 | 60,702 |
| Այլ օգուտ/(վնաս) | (9,332) | 4,254 |
| **Շահույթ մինչև հարկումը** | **159,790** | **64,956** |
| Շահութահարկի գծով ծախս | (32,183) | (15,985) |
| **Տարվա զուտ շահույթ/(վնաս)** | **127,607** | **48,971** |

**Ալեքսանդր Մուրուզյան** / **Տնօրեն**
**Արտակ Բրուտյան** / **Գլխավոր հաշվապահ**

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Անուշ լինի» ՍՊԸ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա համար**

| | Կանոնադրական կապիտալ | Կուտակված շահույթ (վնաս) | Ընդամենը |
|---|---|---|---|
| | *հազար դրամ* | *հազար դրամ* | *հազար դրամ* |
| **Մնացորդն առ 1 հունվարի 2009թ.** | **50** | **(2,322)** | **(2,272)** |
| Տարվա զուտ շահույթ | - | 48,971 | 48,971 |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2009թ.** | **50** | **46,649** | **46,699** |
| Տարվա զուտ շահույթ | - | 127,607 | 127,607 |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2010թ.** | **50** | **174,256** | **174,306** |

**Ալեքսանդր Մուրուզյան** / **Տնօրեն**
**Արտակ Բրուտյան** / **Գլխավոր հաշվապահ**

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Անուշ լինի» ՍՊԸ**
**2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա համար**

| | 2010 հազար դրամ | 2009 հազար դրամ |
|---|---|---|
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ** | **20,268** | **90** |
| **Գործառնական գործունեությունից** | | |
| Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ | 2,650,585 | 2,573,310 |
| Գործառնական այլ գործունեությունից մուտքեր | 11,637 | 34 |
| Մատակարարներին վճարումներից ելքեր | (2,412,732) | (2,791,894) |
| Վճարումներ աշխատավարձի գծով | (15,666) | (6,815) |
| Վճարումներ շահութահարկի գծով | (21,200) | (21,600) |
| Վճարումներ այլ հարկերի գծով | (37,850) | (1,260) |
| Վճարումներ սոցիալական ապահովության գծով | (3,410) | (1,840) |
| Գործառնական այլ ելքեր | (4,893) | (5,836) |
| ***Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***166,471*** | ***(255,901)*** |
| **Ներդրումային գործունեությունից** | | |
| Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր | (3,983) | (13,911) |
| ***Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***(3,983)*** | ***(13,911)*** |
| **Ֆինանսական գործունեությունից** | | |
| Փոխառությունների ստացումից մուտքեր | - | 610,000 |
| Փոխառությունների մարումից ելքեր | (40,000) | (320,000) |
| ***Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***(40,000)*** | ***290,000*** |
| ***Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***122,488*** | ***20,188*** |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ | (1,325) | (10) |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ** | **141,431** | **20,268** |

**Ալեքսանդր Մուրուզյան** / **Տնօրեն**
**Արտակ Բրուտյան** / **Գլխավոր հաշվապահ**

**«ՍՈՍ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ**
**Անկախ աուդիտորական եզրակացություն N 08**
**«Անուշ լինի» ՍՊԸ 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ**
*Ներկայացվում է «Անուշ լինի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավարությանը*

Մեր կողմից իրականացվել է «Անուշ լինի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը եւ այլ ծանոթագրություններ:

**Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

Մենք պատասխանատու ենք ՀՀ Կառավարության 21.04.2005 թ. թիվ 509-Ն որոշմամբ հաստատված աուդիտ ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել եւ անցկացնել՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, եւ ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ, կարծիք կազմելու համար:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Անուշ լինի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաեւ նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները եւ դրամական հոսքերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

***18 մարտի 2011 թ.***
***«ՍՈՍ-Աուդիտ» ՍՊԸ***
***Մանվել Ղազարյան*** — ***Տնօրեն***
***Գնել Խաչատրյան*** — ***Աուդիտոր***

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 10.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: